

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԶԱՂԱՔԱՅԻՄԱԿԱՆ ԱՍՍԱԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՅ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԲՆՈՐՈՇՈՂ ՀԱՄԱԹՎԵՐԸ
(Թավշյա հեղափոխությունից առաջ 2015-2017թթ.
և հետո 2019թ.)

(ՀՀ իրավապահ մարմինների
կամայականության և ՀՀ Ոստիկանության
վստահության համաթվերը)



**ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՈՂ
ՀԱՄԱԹՎԵՐԸ
(Թավշյա հեղափոխությունից առաջ 2015-
2017թթ. և հետո 2019թ.)**

(ՀՀ իրավապահ մարմինների կամայականության և
ՀՀ Ոստիկանության վստահության համաթվերը)

Վանաձոր
2020

Սույն զեկույցը պատրաստվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում՝ Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ:

Քանակական ուսումնասիրությունը և վերլուծությունը իրականացվել է «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» հասարակական կազմակերպության (APR Group) ներգրավմամբ:

Զեկույցում հնչած կարծիքները հեղինակներինն են, և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Հեղինակային խումբ՝

Ռուբեն Սարգսյան՝ սոցիոլոգ, փորձագետ
Արթուր Սաքունց՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	6
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴ.....	7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔ	7
ՀԱՐՅՎԱԾՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ	10
ՀԱՄԱԹՎԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	14
ՀԱՄԱԹՎԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	14
ՀԱՄԱԹՎԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ	16
ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԴԱՏԱՐԱՆՆԵՐ, ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ)	
ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎԸ.....	18
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԹՎԵՐԻ ՎՐԱ	48
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ.....	51
ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ	82
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.....	82
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ/ՏԱԳՆԱՊԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ.....	86
ԱՄՓՈՓՈՒՄ	92

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զեկույցում ամփոփված են 2019 թ. մայիսին ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) կողմից՝ «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (այսուհետ՝ APR Group) հասարակական կազմակերպության ներգրավմամբ իրականացված կրկնվող սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները:

Հետազոտության հիմնական **նպատակն** է հաշվարկել իրավապահ մարմինների գործունեությունը բնորոշող համաթվերը, մասնավորապես՝ ՀՀ Ոստիկանության, դատարանների, դատախազության կամայականության և ՀՀ Ոստիկանության վստահության համաթիվը:

Նշված համաթվերի հաշվարկման նպատակով մշակվել է մեթոդոլոգիա և հետազոտության գործիք, որոնց հիմքում ընկած են ՌԴ-ում գործող «Օբժեստվեննի վերդիկտ» հիմնադրամի (Фонд “Общественный вердикт”) և «Լեվադա-Ցենտր» հետազոտական հասարակական կազմակերպության (АНО “Левада-Центр”) կողմից համատեղ իրականացվող նմանատիպ հետազոտության մեթոդոլոգիան և գործիքները, որոնք տեղայնացվել են և 2013թ. ապրիլ-մայիս ամիսներին «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը ՀՀ հյուսիսային մարզերում» պիլոտային հետազոտության շրջանակներում փորձարկվելուց հետո կատարելագործվելով, 2015-2017թթ. և 2019թ. կիրառվել են ՀՀ բոլոր մարզերում և ք. Երևանում:

Սույն զեկույցում ներկայացված է տեղեկության հավաքման մեթոդաբանությունը՝ ներառյալ հետազոտության ընտրանքի նկարագրությունը, համաթվերի հաշվարկման մեթոդաբանությունը, այդ թվում՝ հաշվարկման բանաձևերը, ինչպես նաև հետազոտության արդյունքները: Առանձին անդրադարձ է արվել իրավապահ մարմինների կամայականության, ոստիկանության վստահության համաթվին, ինչպես նաև ներկայացված են իրավապահ մարմինների նկատմամբ վերաբերմունքը և բնակչության անհանգստության մակարդակը: Արդյունքները ներկայացվում են 2015-2017թթ. և 2019թ. իրականացրած նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքների հետ համեմատությամբ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է հաշվարկել ՀՀ իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատաբաններ, դատախազություն) կամայականության համաթիվը (այսուհետ՝ կամայականության համաթիվ) և ՀՀ Ոստիկանության վստահության համաթիվը (այսուհետ՝ վստահության համաթիվ):

Հետազոտության խնդիրները

Սույն հետազոտության խնդիրներն են՝

1. պարզել ՀՀ բնակչության կողմից իրավապահ մարմինների նկատմամբ վստահության մակարդակը,
2. պարզել ՀՀ-ում իրավապահ մարմինների կողմից քաղաքացիների նկատմամբ ապօրինությունների և կամայականությունների դրսևորման մակարդակը,
3. պարզել ոստիկանության հետ ՀՀ բնակչության համագործակցության պատրաստակամության մակարդակը,
4. պարզել ՀՀ իշխանությունների կողմից քաղաքական ընդդիմադիրների (հակառակորդների) դեմ իրավապահ մարմինների օգտագործման հաճախականությունը,
5. հաշվարկել քաղաքացիների անհանգստության համաթիվը,
6. պարզել իրավապահ մարմինների կամայականություններից բնակչության պաշտպանվածության մակարդակը,
7. հաշվարկել անձնական անհանգստության համաթիվը,
8. բացահայտել ոստիկանության կամայականություններից պաշտպանվելու նպատակով հանդես եկող այլ իրավապահ մարմինների (դատաբաններ, դատախազություն)՝ որպես պաշտպանության մեխանիզմի արդյունավետությունը՝ ըստ հարցվողների,
9. իրականացնել վերոնշյալ ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ըստ հարցվածների սոցիալ-տնտեսական կարգավիճակի, տեղեկության ստացման հիմնական աղբյուրների և տարիների,
10. վերհանել ոստիկանության որոշ ստորաբաժանումների աշխատանքի գնահատականները,
11. վերհանել որոշ իրավապաշտպան կառույցների աշխատանքի գնահատականները,
12. գնահատել բնակչության անհանգստության/տագնապի մակարդակը՝ ըստ վայրերի և հանցագործությունների տեսակների:

Տեղեկության հավաքագրման մեթոդ

Տեղեկության հավաքման համար կիրառվել է քանակական հարցազրույցների մեթոդը, ինչը հնարավորություն է տվել ըստ բնակավայրերի՝ ստանալու բոլոր սոցիալական խմբերի կարծիքը՝ խնդրի վերաբերյալ: Շնորհիվ ներկայացուցչական ընտրանքի՝ ստացված տեղեկությունը հնարավոր է տարածել տարբեր բնակավայրերի վրա ամբողջությամբ, պարզել կարծիքների տարածվածությունը և բաշխվածությունը, դուրս բերել օրինաչափություններ: Իրականացվել են անմիջական հարցազրույցներ՝ հարցազրուցավար-հարցվող դեմ առ դեմ զրույցի միջոցով:

Որպես հետազոտության գործիք կիրառվել է ստանդարտացված հարցաթերթը՝ բաղկացած փակ և կիսափակ հարցերից: 2019թ., 2017թ. և 2016թ. -ի համար կիրառվել է 2015թ. կիրառված հարցաթերթիկը՝ գործածվել է CAPI-ի տեխնիկայի միջոցով¹:

Հետազոտության արդյունքները վերլուծվել են վիճակագրական SPSS ծրագրի միջոցով: Իրականացված հետազոտությունը կրկնվող/տրենդային հետազոտություն է²:

Հետազոտության ընտրանք

Հետազոտություններն իրականացվել են 2015-2016 թթ. օգոստոս և 2017թ. և 2019թ.-ի մայիս ամիսներին՝ Հայաստանի բոլոր մարզերում և Երևան քաղաքում բնակվող 18 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության շրջանում: 2019թ.-ի հետազոտության ընտրանքի հաշվարկման համար հիմք է ծառայել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված «ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ «09» Դեկտեմբեր 2018 թ. Արձանագրություն Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության արդյունքների³» փաստաթուղթը, որտեղ ընտրողների թիվը կազմում է 2.593.140 մարդ: Այսպիսով՝ հետազոտության գլխավոր համախմբությունը կազմել է 2.593.140 մարդ: Հետազոտության տվյալների $\pm 2,8\%$ ճշգրտության դեպքում 95% վստահության միջակայքում ընտրանքային համախմբությունը հաշվարկվել է 1200 մարդ:

Ուսումնասիրության ընտրանքները կառուցվել են միանման մեթոդաբանությամբ: 4 դեպքում էլ կառուցվել է բազմաստիճան (շերտավորված) նպատակաուղղված

¹ Computer-assisted personal interviewing՝ կիրառման ժամանակ, հարցազրուցավարը հարցվողի հետ դեմ առ դեմ հարցազրույցի ժամանակ ստացված տեղեկությունը մուտքագրում է համակարգչում(плащает) տեղադրված էլեկտրոնային հարցաթերթում: Ծրագիրը թույլ է տալիս ապահովել իրականացվող հարցազրույցների վերահսկողության բարձր մակարդակ:

² Տրենդային հետազոտություններն իրականացվում են միևնույն գլխավոր համախմբության համար, որոշակի ժամանակային միջակայքում, հարաբերականորեն միանման մեթոդիկայով: Տրենդային հետազոտությունների նպատակն է սոցիալական փոփոխությունների միտումների բացահայտումը՝ տվյալ դեպքում սոցիալական տրամադրվածությունների:

³ <https://res.elections.am/images/doc/09.12.18v.pdf>

պատահական ընտրանք: Ընտրանքի կառուցման սկզբնական փուլերում նպատակաուղղված կերպով առանձնացվել են ընտրանքային միավորները (մարզերը, բնակավայրերը), այնուհետև իրականացվել պատահական ընտրություն: Պատահական ընտրությունը կատարվել է «համակարգված քայլի» սկզբունքով:

Ընտրանքի կառուցումն իրականացվել է հետևյալ փուլերով.

1. Մարզերի ընտրություն

Հետազոտության մեջ ընդգրկված են ՀՀ 10 մարզերը և Երևան քաղաքը: Հետազոտության արդյունքների ներկայացուցչականությունը տվյալ մարզերի համար ամբողջությամբ ապահովվել է:

2. Բնակավայրերի/հարցման կետերի ընտրություն

Ապահովելու համար գյուղական և քաղաքային բնակավայրերի բնակիչների ներկայացվածությունը ընտրանքում՝ նախ հաշվարկվել է յուրաքանչյուր մարզի գյուղական և քաղաքային բնակավայրերում ապրողների տոկոսային հարաբերակցությունը: Ըստ այդմ՝ որոշվել է, թե յուրաքանչյուր մարզում իրականացվելիք հարցազրույցների որ մասը պետք է անցկացնել քաղաքներում, որ մասը՝ գյուղերում: Հաշվարկելու համար, թե քանի քաղաք և գյուղ պետք է ընդգրկել ընտրանքում, քաղաքներին կամ գյուղերին բաժին ընկնող հարցվողների թիվը բաժանվել է քաղաքի կամ գյուղի համար հաշվարկված օպտիմալ թվին: Յուրաքանչյուր գյուղում օպտիմալ համարվում է միջինում 6 հարցազրույց, ընդ որում՝ այդ թիվը չպետք է գերազանցի 7-ը: Ընտրված քաղաքում օպտիմալ է համարվել միջինում 11 հարցազրույցը, ընդ որում՝ այդ թիվը չի գերազանցել 25-ը: Ընտրված քաղաքում կամ գյուղում իրականացվելիք հարցազրույցների թիվը հաշվարկելիս՝ նույնպես հաշվի է առնվել տվյալ համայնքի բնակչության համամասնությունը:

Յուրաքանչյուր մարզից համայնքներ ընտրելիս՝ հաշվի է առնվել կենտրոնի հետ ունեցած հեռավորությունը: Այդպիսով՝ առանձնացվել է հարցման կետերի 3 տիպ՝

1. մարզկենտրոն,
2. մարզային համայնքներ, որոնք գտնվում են մարզկենտրոնի և ծայրամասերի մեջտեղում,
3. ծայրամասային համայնքներ, որոնք գտնվում են մարզի ծայրամասում:

3. Տնային տնտեսության ընտրություն


Ընտրանքի կառուցման 3-րդ փուլում առանձնացվել է 3-րդ շերտը. ընտրվել են տնային տնտեսությունները: Յուրաքանչյուր հարցման կետում տնային տնտեսությունների ընտրությունն իրականացվել է համակարգված քայլի միջոցով:

4. Հարցվողի ընտրություն

4-րդ փուլում տնային տնտեսության 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամներից իրականացվել է հարցվողի ընտրություն՝ պատահականության սկզբունքով: 2015թ. հետազոտության ընթացքում պատահականությունն ապահովելու նպատակով կիրառվել է տնային տնտեսության անդամների «ամենավերջին ծննդյան օրվա» սկզբունքը: Յուրաքանչյուր տնային տնտեսությունից հարցվել է միայն մեկ անձ: Իսկ 2016թ., 2017թ. և 2019թ. պատահականությունն ապահովելու նպատակով կիրառվել է CAPI-ի ծրագրում ներդրված «Քիշի աղյուսակը»⁴:

3 դեպքերում էլ հարցվածների թիվը կազմել է 1200-ական մարդ:

2019թ. հարցումների իրականացման աշխարհագրությունը



⁴ «Քիշի աղյուսակն» (kish grid) օգտագործվում է պատահական ընտրանքի սկզբունքի հիման վրա իրականացվող հարցումների ժամանակ, որը սահմանում է ալգորիթմ՝ հարցազրույցի նպատակով տնային տնտեսության (SS) անդամներից մեկի ընտրությունը: Ընթացակարգը մշակված է այնպես, որ SS յուրաքանչյուր անդամ հարցազրույցի համար ընտրվելու հավասար հնարավորություն ունի: Անվանումն առաջացել է տվյալ մեթոդը մշակողի անունից՝ Լեսլի Քիշի (Leslie Kish):

Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական պատկերը

2015թ. հետազոտության ժամանակ հարցվողների բաշխումն ըստ սեռի եղել է հետևյալը. տղամարդ՝ 26.3%, կին՝ 73.7%-ը: 2016թ-ին համապատասխանաբար՝ 33.8% և 66.3%-ը, 2017թ.-ին՝ 36.6% և 63.4%, իսկ 2019թ.-ին՝ 34.6% և 65.4%: Հարցվողների տարիքային բաշխումը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հարցվողների տարիքային բաշխումը

Տարիքային խումբ	Հարցման տարեթիվը			
	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
18 -25 տարեկան	11.1%	14.8%	12.6%	11%
26 -35 տարեկան	19.6%	20.4%	21.7%	18.4%
36 – 45 տարեկան	14.4%	16.5%	16.6%	18.9%
45 – 60 տարեկան	29.1%	26.3%	25.9%	24.4%
61 և ավելի տարեկան	25.8%	21.9%	23.3%	27.3%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

Հարցվողների բաշխումն՝ ըստ կրթության, ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հարցվողների բաշխումն ըստ կրթության

	Հարցման տարեթիվը			
	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Տարրական	0.5%	0.4%	0.7%	0.8%
Թերի միջնակարգ (8-ամյա)	7.0%	6.0%	5.0%	4.7%
Միջնակարգ (10-12-ամյա)	34.3%	37.1%	36.1%	36.1%
Միջնակարգ մասնագիտական	27.7%	22.3%	26.8%	23.3%
Թերի բարձրագույն	3.3%	4.1%	4.1%	4.8%
Բարձրագույն	26.5%	29.7%	27.0%	29.8%
Ետբուհական (գիտական աստիճան)	0.7%	0.4%	0.4%	0.6%
Հրաժարվում եմ պատասխանել	0.1%	0.0%	0.7%	0.0%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

Հարցվողների բաշխումն ըստ ընտանիքի միջին ամսական եկամտի՝ ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Հարցվողների բաշխումն՝ ըստ ընտանիքի միջին ամսական եկամտի

Եկամուտը՝ դրամային արտահայտությամբ	Հարցման տարեթիվը			
	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Մինչև 35000 դրամ	10.30%	14.40%	19.75%	8.3%
35001-ից մինչև 65000 դրամ	25.90%	25.70%	21.00%	18.0%
65001-ից մինչև 150000 դրամ	41.00%	39.50%	36.50%	39.5%
150001-ից մինչև 350000 դրամ	17.03%	16.40%	16.08%	21.9%
350001 և դրանից ավելի	3.80%	4.00%	3.25%	7.3%
Դժվարանում եմ պատասխանել	0.30%	0%	3.42%	0.0%
Հրաժարվում եմ պատասխանել	1.50%	0%	19.75%	5.1%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

Հարցվողներն իրենց սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրել են՝ պատասխանելով հետևյալ հարցին՝ «Խնդրում եմ նշել, թե ստորև բերված դատողություններից որն է առավել լավ բնութագրում Ձեր տնտեսական դրությունը:» Պատասխանները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հարցվողների բաշխումն՝ ըստ իրենց սոցիալ-տնտեսական վիճակի

Տնտեսական դրություն	Հարցման տարեթիվը			
	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Գումարը չի բավարարում սնունդ գնելու համար	27.8%	23.0%	21.3%	19.1%
Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար	35.1%	37.2%	35.8%	30.3%
Գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար	24.1%	24.0%	24.0%	22.8%
Գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար	12.6%	15.8%	18.0%	27.2%
Հրաժարվում եմ պատասխանել	0.4%	0%	0.8%	0.8%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

«Ձեզ ո՞ր խավի ներկայացուցիչ էք համարում» հարցի պատասխանները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Հարցվողների բաշխումն՝ ըստ խավի

Խավ ⁵	Հարցման տարեթիվը			
	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Վերին խավի	3.3%	1.9%	3.2%	2.6%
Միջին խավի վերին հատված	11.6%	12.1%	10.7%	13.7%
Միջին խավի միջին հատված	56.1%	53.7%	57.4%	60.3%

⁵ Խավի պատկանելությունն այս ուսումնասիրության մեջ հիմնվում է հարցվողի սուբյեկտիվ ինքնագնահատականի վրա:

Միջին խավի ստորին հատված	12.7%	15.7%	10.9%	13.1%
Միջինից ցածր խավ	10.8%	11.0%	12.1%	6.3%
Զբավոր	4.7%	5.7%	5.8%	4.1%
Դժվարանում եմ պատասխանել	0.3%	0%	0%	0%
Հրաժարվում եմ պատասխանել	0.6%	0%	0%	0%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

Հարցվողների բաշխումն ըստ բնակավայրերի տիպերի՝ ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Հարցվածների բաշխումն՝ ըստ բնակավայրի տիպի

Բնակավայր	Հարցման տարեթիվը			
	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Քաղաքային	72.0%	72.0%	72.0%	72.0%
Գյուղական	28.0%	28.0%	28.0%	28.0%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

Հարցվածների սեռային բաշխվածությունն՝ ըստ բնակավայրերի տիպերի, ներկայացված է Աղյուսակ 7.1-ում:

Աղյուսակ 7.1

Խաչաձև վերլուծություն՝ ըստ հարցվածների սեռի և բնակավայրի տիպերի

		Բնակավայրի տիպը								Ընդամենը
		2015թ.		2016թ.		2017թ.		2019թ.		
		Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Գյուղական	
Հարցվողի սեռը	Արական	69.3%	30.7%	74.1%	25.9%	69.5%	30.5%	71.1%	28.9%	100.0%
	Իգական	73.0%	27.0%	70.7%	29.3%	73.5%	26.5%	72.5%	27.5%	100.0%
Ընդամենը		72.0%	28.0%	72.0%	28.0%	72.0%	28.0%	72.0%	28.0%	100.0%

Ինչպես երևում է Աղյուսակ 1-7.1ում՝ 2015-2017թթ. և 2019թ. հետազոտությունների ընթացքում, գրեթե, պահպանվել են հարցվողների համամասնությունները՝ ըստ հիմնական բնութագրիչների:

Թե հիմնականում որտեղից են հարցվողները ստանում տեղեկություն, ներկայացված է Աղյուսակ 7.2-ում:

Աղյուսակ 7.2⁶

⁶ Հարց. «Հիմնականում որտեղից եք տեղեկանում Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ»

**Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հիմնական
տեղեկատվության աղբյուրները**

Տեղեկատվական աղբյուրներ	2016թ.	2017թ.	2019թ.
Հեռուստատեսություն	49.8%	54.5%	50.4%
Ռադիո	1.9%	2.2%	1.4%
Տպագիր մամուլ	1.0%	0.5%	0.6%
Առցանց մամուլ	22.7%	20.7%	11.8%
Սոցիալական կայքեր	20.7%	18.3%	32.1%
Աշխատավայր	0.6%	0.6%	0.5%
Ընկերներ, ծանոթներ, բարեկամներ	2.4%	2.4%	2.3%
Հանդիպումներ, հանրային քննարկումներ, հասարակական և/կամ քաղաքական	0.6%	0.3%	0.4%
Դժվարանում եմ պատասխանել	0.3%	0.6%	0.4%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

2016-2017թթ. և 2019թ. տվյալները վերլուծվել են՝ ըստ հարցվողների տեղեկությունների ստացման աղբյուրների, որը ցույց է տալիս համաթվերի էական տարբերությունները՝ պայմանավորված տվյալ գործոնով:

Համաթվերի հաշվարկման մեթոդաբանություն

Իրավապահ մարմինների կամայականության համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը

Համաթվի սահմանումը

Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը հանդիսանում է հասարակության զանգվածային տրամադրությունների միտումների ընդհանրացված համաթիվ, որն արտացոլում է ոստիկանության, դատախազության և դատական մարմինների կամայական օրենքով չսահմանված գործողություններից, հասարակության անպաշտպան լինելու զգացումները: Համաթվի հաշվարկման համար օգտագործվող հարցերն ուղղված են բացահայտելու իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ հասարակության գնահատականները:

Կամայականության համաթվի հաշվարկը կառուցվում է 3 բաղադրիչների (բաղկացուցիչների) հիման վրա.

«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ»

Տվյալ համաթիվը կառուցվում է 3 հիմնական հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվերի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով: Այդ հարցերն են. «Որքանով եք վստահում իրավապահ մարմիններին (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) (Ամբողջ համակարգին) (Բոլորը միասին)», «Ըստ Ձեզ՝ որքանով է Հայաստանի համար լուրջ խնդիր հանդիսանում իրավապահ մարմինների կողմից դրսևորվող կամայականությունը և ապօրինությունը» և «Ըստ Ձեզ՝ որքան հաճախ են ՀՀ իշխանություններն իրավապահ մարմիններին օգտագործում որպես ընդդիմության (սեփական քաղաքական հակառակորդների) դեմ ճնշման միջոց»:

«Անձնական մտահոգվածության համաթիվ»

Այս համաթիվը հաշվարկվում է «Հնարավոր է արդյոք, որ Դուք կամ Ձեր մտերիմները տուժեք իրավապահ մարմինների կամայականություններից» և «Անձամբ Դուք որքանով եք Ձեզ պաշտպանված զգում իրավապահ մարմինների կամայականություններից» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

«Անձնական պաշտպանվածության համաթիվ»

Համաթիվը կառուցվում է «Եթե հանկարծ Դուք ոստիկանության կամայականության գոհ դառնաք, ապա, ըստ Ձեզ՝ արդյոք այլ իրավապահ

մարմինները (դատարաններ և/կամ դատախազություն) Ձեզ կաշտպանե՞ն» և «Ըստ Ձեզ՝ Հայաստանում հնարավո՞ր է արդյոք օրինական միջոցներով վերականգնել ոստիկանության կողմից խախտված իրավունքները» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

Ոստիկանության վստահության համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը

Համաթվի սահմանումը

Ոստիկանության վստահության համաթիվը հանդիսանում է հասարակության զանգվածային տրամադրությունների միտումների ընդհանրացված համաթիվ, որն արտացոլում է ոստիկանության հանդեպ վերաբերմունքի և վստահության, գործունեությունից գոհունակության, քաղաքացի-ոստիկան համագործակցության պատրաստակամության աստիճանի զգացումները:

Համաթվի հաշվարկման համար օգտագործվող հարցերն ուղղված են բացահայտելու ոստիկանության հանդեպ վերաբերմունքի, գործունեության և համագործակցության պատրաստակամության վերաբերյալ հասարակության դիրքորոշումները և գնահատականները:

Ոստիկանության հանդեպ վստահության համաթվի հաշվարկը կառուցվում է նույնպես 3 բաղադրիչների (բաղկացուցիչների) հիման վրա.

«Ոստիկանության գործունեության գնահատում»

Սույն համաթիվը կառուցվում է «Որքանո՞վ եք բավարարված Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանության գործունեությունից» և «Ըստ Ձեզ՝ կարո՞ղ է արդյոք Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանությունը պաշտպանել Ձեզ/Ձեր ընտանիքին հանցագործներից» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունք»

Այս համաթիվը հաշվարկվում է «Որքանո՞վ եք վստահում Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանությանը» և «Ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանության աշխատողներին» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամություն»

Համաթիվը կառուցվում է 3 հիմնական հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվերի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով. «Ըստ Ձեզ՝ արդյո՞ք քաղաքացիները պետք է օգնեն ոստիկանությանը», «Եթե Դուք ծեծի,

կողոպուտի, գողության և այլ նմանատիպ հանցագործությունների ականատես/վկա դառնայիք, արդյո՞ք ոստիկանություն կկանչեիք» և «Որոշ մարդիկ, հանդիսանալով հանցագործության ականատես/վկա, կանչում են ոստիկանությանը: Եթե Դուք ծեծի, կողոպուտի, գողության և այլ նմանատիպ հանցագործությունների ականատես/վկա դառնայիք, արդյո՞ք ոստիկանություն կկանչեիք»:

Համաթվերի հաշվարկման բանաձևերը

Համաթվերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$Index = a + 0.5 * b - 0.5 * c - d$$

որտեղ՝

«Index»-ը յուրաքանչյուր հարցի պատասխանների հիման վրա հաշվարկված գործակիցն է,

«a»-ն առավել «դրական» պատասխանների տոկոսային բաշխվածությունն է,

«b»-ն՝ «դրական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,

«c»-ն՝ «բացասական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,

«d»-ն՝ առավել «բացասական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը:

Իսկ «Ինչպե՞ս եք վերաբերում Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանության աշխատողներին» հարցի պատասխանների հիման վրա ստացվող համաթիվը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$Բանաձև՝ Index = a + b + 0.5 * c - 0.5 * d - e - f$$

որտեղ՝

«Index»-ը այս հարցի պատասխանների հիման վրա հաշվարկված գործակիցն է,

«a» և «b»-ն՝ առավել «դրական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,

«c»-ն՝ «դրական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,

«d»-ն՝ «բացասական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,

«e» և «f»-ը՝ առավել «բացասական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը:⁷

Ըստ յուրաքանչյուր հարցի՝ համաթիվը հաշվարկվում է դրա ընդհանրացված արժեքը որպես «բացասական» և «դրական» պատասխանների մասնաբաժինների տարբերություն, ընդ որում՝ առավել «բացասական» կամ առավել «դրական»

⁷ Տվյալ հարցի պատասխանները՝ ըստ կողմնորման. «a»՝ «Հարգում եմ», «b»՝ «Վստահում եմ», «c»՝ «Համակրում եմ», «d»՝ «Հակակրում եմ», «e»՝ «Զգուշավորություն եմ դրսևորում, վախենում եմ», «f»՝ «Վրդովվում եմ, զայրանում եմ»:


պատասխանները վերցվում են «1» կշռով, իսկ մասնակի «բացասական» կամ «դրական» պատասխանները՝ «0.5» կշռով:

Համաթիվը հաշվարկվում է որպես մի քանի մասնակի համաթվերի (2 կամ 3 մասնակի համաթվի յուրաքանչյուր բաղադրիչի համար) ընդհանրացված արժեքների միջին թվաբանական: Այդպիսով՝ և՛ կամայականության/վստահության ընդհանրացված համաթվերը, և՛ դրա բաղադրիչները փոփոխվում են «-100»-ից մինչև «+100» միջակայքում: **Ընդ որում՝ եթե համաթվերից որևէ մեկը մեծ է «0»-ից, դա նշանակում է, որ գերակշռում են «դրական» գնահատականները, ինչը ցույց է տալիս նկարագրվող խնդրի բացակայությունը, «0»-ից ցածրի դեպքում՝ «բացասական» գնահատականները, ինչն էլ իր հերթին մատնանշում է նկարագրվող խնդրի առկայությունը:**

Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվը

Սույն հետազոտության արդյունքների հիման վրա հաշվարկվել է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) «Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվը» (այսուհետ՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ»), որը 2019թ.-ին կազմել է «35»⁸: Համադրելով նախորդ տարիներին մեր կողմից իրականացված նույնանման հետազոտությունների արդյունքների հետ՝ տեսնում ենք, որ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» կտրուկ աճել է. 2017թ.-ի համեմատ՝ «28»-ով, իսկ 2016թ.-ի համեմատ՝ 41-ով (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. 2015-2017թթ. և 2019թ.-ի «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ»



«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ» 3 բաղկացուցիչ համաթիվերը («Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ», «Անձնական անպաշտպանվածության համաթիվ», «Անհատական մտահոգվածության համաթիվ»)⁹ նախորդ տարիների համեմատ 2019թ. նույնպես աճել են: Այսպես՝ եթե «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» 2016թ.-ի համեմատ 2017թ.-ին աճել է «13»-ով, ապա 2019թ.-ին աճել է 35-ով՝ 2017թ.-ի համեմատ: «Անձնական

⁸ Հիշեցնենք, որ սույն հետազոտության շրջանակում համաթիվերը գտնվում են «-100»-ից մինչև «+100» միջակայքում: Եթե որևէ համաթիվ մեծ է «0»-ից, դա նշանակում է, որ ուսումնասիրվող խնդիրների վերաբերյալ հասարակության մեջ գերակշռում են «դրական» գնահատականները, իսկ «0»-ից ցածրի դեպքում՝ բացասական գնահատականները:

⁹ Աղյուսակներում և գծապատկերներում այս համաթիվերը ներկայացվում են որպես «Ընդհանուր համաթիվ»:

անպաշտպանվածության համաթիվը» 2017թ-ի համեմատ 2019թ.-ին աճել է 40-ով, իսկ 2017թ.-ին աճել էր «16»-ով՝ 2016թ.-ի համեմատ: «Անհատական մտահոգվածության համաթիվը» 2017թ-ի համեմատ 2019թ.-ին աճել է 10-ով, իսկ 2017թ.-ին աճել էր «12»-ով՝ 2016թ. համեմատ (տե՛ս Աղյուսակ 8.1):

Աղյուսակ 8.1

«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ» 3 բաղկացուցիչ համաթիվերի փոփոխությունը 2015-2017թթ. և 2019թ. ընթացքում

Համաթիվեր (բաղկացուցիչներ)	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ»	-22	-30	-17	18
«Անձնական անպաշտպանվածության համաթիվ»	5	-7	9	49
«Անհատական մտահոգվածության համաթիվ»	20	17	29	39

Այսպիսով, դիտարկելով այս համաթիվերը 3 տարիների կտրվածքով, նկատելի է, որ բոլոր համաթիվերն ունեն աճի միտում, 2019թ-ին, սակայն, բոլոր տարիների համեմատ արձանագրվել է կտրուկ աճ: Աղյուսակ 8.1-ում ներկայացված **«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ» բաղկացուցիչ հանդիսացող «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» 3 տարիների** գտնվել է բացասական տիրույթում՝ 0-ից ցածր, սակայն 2019թ.-ին այն բավական մեծ աճ է ունեցել՝ դառնալով դրական: Հիշեցնենք, որ այս բաղկացուցիչ համաթիվը հաշվարկվում է «Որքանո՞վ եք վստահում իրավապահ մարմիններին (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) (Ամբողջ համակարգին (Բոլորը միասին))», «Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է Հայաստանի համար լուրջ խնդիր հանդիսանում իրավապահ մարմինների կամայականությունը և անօրինությունը» և «Ըստ Ձեզ՝ որքա՞ն հաճախ են ՀՀ իշխանություններն իրավապահ մարմիններին օգտագործում որպես ընդդիմության (սեփական քաղաքական հակառակորդների) նկատմամբ ճնշման միջոց» հարցերի պատասխանների արդյունքում: Առաջին և երրորդ հարցերի պատասխանները գտնվում են դրական տիրույթում և արժեքները կազմում են համապատասխանաբար 45 և 43.1 (տե՛ս հավելված 1-4), երկրորդ հարցի պատասխանները գտնվում են բացասական տիրույթում, քանի որ պատասխանների տարբերակներից ավելի շատ նշվել են բացասականները (տե՛ս Աղյուսակներ 8.2):

Աղյուսակ 8.2

Հարց «Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է Հայաստանի համար լուրջ խնդիր հանդիսանում իրավապահ մարմինների կամայականությունը և անօրինությունը»

Պատասխանների տարբերակներ	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Շատ լուրջ խնդիր է	54.9	57.8	47.3	40.4

Որոշ չափով լուրջ խնդիր է	23.5	23.5	28.7	28.2
Այդքան էլ լուրջ խնդիր չէ	7.8	6.6	8.7	10.3
Այդպիսի խնդիր գոյություն չունի	7.0	8.6	10.7	15.5
Դժվարանում եմ պատասխանել	6.8	6.8	4.7	5.7
Ա.Ա.Ցուցանիշի ընդհանրացված արժեք	-56	-58	-47	-34

Հետաքրքրական է, որ նախորդ տարիների արդյունքներով «Ըստ Ձեզ՝ որքա՞ն հաճախ են ՀՀ իշխանություններն իրավապահ մարմիններին օգտագործում որպես ընդդիմության (քաղաքական հակառակորդների) նկատմամբ ճնշման միջոց» հարցի պատասխանները նույնպես բացասական տիրույթում էին, սակայն 2019թ.-ի հետազոտության տվյալներն էականորեն տարբերվում են նախորդ տարիների տվյալներից: Ինչպես երևում է Աղյուսակ 8.3-ից, տվյալ հարցի ընդհանրական արժեքը 2017թ.-ին կազմել է «-17», իսկ 2019թ.-ին աճել է մինչև «+43.1»: Ընկալումների փոփոխությունների վրա որոշիչ ազդեցություն են ունեցել 2018թ.-ի ապրիլին թավշյա հեղափոխությամբ պայմանավորված քաղաքական գործընթացները: Ակնհայտ է, որ հարցվողների ընկալմամբ իշխանությունները նախկինում իրավապահ մարմիններին օգտագործում էին որպես ընդդիմության նկատմամբ ճնշման միջոց, որից հրաժարվել են ներկա իշխանությունները: Ակնհայտ է, որ նման պատկերացումները պայմանավորված են թավշյա հեղափոխությունից հետո իրավապահ մարմինների վարքի և գործելաոճի փոփոխությամբ:

Աղյուսակ 8.3

Հարց «Ըստ Ձեզ՝ որքա՞ն հաճախ են ՀՀ իշխանություններն իրավապահ մարմիններին օգտագործում որպես ընդդիմության (քաղաքական հակառակորդների) նկատմամբ ճնշման միջոց»


Պատասխանների տարբերակներ	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Երբեք չեն օգտագործում	7.2	8.7	8.3	35.2
Երբեմն օգտագործում են	27.8	24.5	31.3	38.8
Հաճախ են օգտագործում	25.7	24.0	22.4	9.7
Դա մշտական պրակտիկա է	29.3	36.4	29.9	6.7
Դժվարանում եմ պատասխանել	9.4	5.8	7.5	8.8
Հրաժարվում եմ պատասխանել	0.7	0.7	1	1

Ա.Յ. Ցուցանիշի ընդհանրացված արժեք	-21	-27	-17	43.1
-----------------------------------	-----	-----	-----	------

2015-2017թթ. ընթացքում իրավապահ մարմինների գործելաճը բացասական գնահատական է ստացել հարցվողների կողմից՝ այդ մարմինների կողմից թե՛ կամայականությունների, թե՛ անօրինականությունների, և թե՛ քաղաքական հակառակորդների հետապնդման տեսակետից: Սակայն, ինչպես վերը ներկայացվեց, 2019թ.-ի արդյունքներն էականորեն տարբերվում են՝ նշված բոլոր բնութագրերով:

Իրականացված բոլոր ուսումնասիրությունների արդյունքում հաշվարկված համաթվերը ներկայացնենք՝ ըստ մարզերի, բնակավայրերի տիպերի, սեռի, տարիքի և սոցիալ-ժողովրդագրական այլ տվյալների:

Դիտարկելով 2019թ.-ի «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» ըստ մարզերի՝ պարզ է դառնում, որ այն ամենացածրն է Երևան քաղաքում («29») և Սյունիքի մարզում («29»), ամենաբարձրը՝ Արարատի («51»), Վայոց Ձորի («49»), Տավուշի («44») և Արմավիրի («43») մարզերում (տե՛ս Գծապատկեր 2):



Միաժամանակ, համեմատելով նախորդ տարիների արդյունքների հետ, տեսնում ենք, որ բոլոր մարզերում էլ նկատվում է համաթվի արժեքի կտրուկ աճ: Այս


համաթվի արժեքների փոփոխությունների միտումներն առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը»՝ ըստ մարզերի և տարեթվերի

Մարզեր ¹⁰	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Երևան	-15	-20	-8	29
Արմավիր	13	-5	20	43
Արարատ	13	1	20	51
Կոտայք	8	2	10	32
Շիրակ	3	-7	12	36
Գեղարքունիք	19	10	16	36
Լոռի	17	-6	9	35
Սյունիք	-22	8	16	29
Արագածոտն	-6	-7	2	32
Տավուշ	9	17	21	44
Վայոց Ձոր	25	19	14	49

«Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» բաղկացուցիչ համաթվերից «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» 2019թ.-ին նույնպես դրական է դարձել բոլոր մարզերում (տե՛ս Գծապատկեր 3):



¹⁰ Աղյուսակ 9-ում և հաջորդող աղյուսակներում ներկայացված մարզերի հերթականությունը դասակարգված է՝ ըստ բնակչության թվաքանակի նվազման http://www.armstat.am/file/article/nasel_01.01.2017.pdf

Այս համաթվի ամենացածր արժեքը Սյունիքի («7») և Գեղարքունիքի («7») մարզերում են, ամենաբարձրը՝ Վայոց Ձորում («40»), Արարատում («39») և Տավուշում («35»): «Քաղաքացիների մտահոգվածության համաթվի» արժեքների փոփոխությունների միտումներն առավել մանրամասն՝ տե՛ս Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը»՝ ըստ մարզերի և տարեթվերի

Մարզեր	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Երևան	-38	-43	-31	12
Արմավիր	-15	-28	-5	27
Արարատ	-15	-19	-4	39
Կոտայք	-9	-22	-19	11
Շիրակ	-24	-31	-17	13
Գեղարքունիք	-1	-21	-3	8
Լոռի	-1	-22	-13	25
Սյունիք	-38	-23	-13	7
Արագածոտն	-24	-33	-19	12
Տավուշ	-19	-4	1	35
Վայոց Ձոր	-3	-17	-15	40


Հավելված 1-ում ներկայացված են համաթվի հաշվարկման հիմքում ընկած հարցերի պատասխաններն՝ ըստ մարզերի:

Հարկ ենք համարում նշել, որ «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2017թ. բացասական է եղել 11 մարզերից 2-ում՝ Երևան քաղաքում («-6») և Արագածոտնի («-7») մարզում, իսկ 2019թ.-ին բոլոր մարզերում ունեցել դրական արժեք (տե՛ս Գծապատկեր 4): Նախորդ 3 հետազոտությունների արդյունքներով՝ այն բացասական է եղել Երևան քաղաքում և Արագածոտնի մարզում, ինչն իր հերթին նշանակում է, որ 2015-2017թթ. ընթացքում այս 2 մարզերի բնակիչների շրջանում հստակ և, գրեթե, անփոփոխ կարծիք և/կամ փորձ է առկա այն բանի շուրջ, որ չկան ոստիկանության կամայականություններից պաշտպանող կառույցներ, ինչպես նաև՝ ոստիկանության կողմից խախտված իրավունքները վերականգնելու համար արդյունավետ միջոցներ¹¹:

Սակայն 2019թ.-ի արդյունքներով այդ մարզերում ցուցանիշի արժեքներն ամեննին էլ ամենացածրը չեն: Ինչպես նշեցինք, բոլոր մարզերում 2019թ.-ին տեղի է ունեցել

¹¹ «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» հաշվարկվում է հետևյալ 2 հարցերի պատասխանների հիման վրա՝ «Եթե հանկարծ Դուք ոստիկանության կամայականության զոհ դառնաք, ապա, ըստ Ձեզ, արդյո՞ք այլ իրավապահ մարմինները (դատարաններ և/կամ դատախազություն) Ձեզ կպաշտպանեն» և «Ըստ Ձեզ՝ Հայաստանում հնարավո՞ր է արդյոք օրինական միջոցներով վերականգնել ոստիկանության կողմից խախտված իրավունքները»:

այս ցուցանիշի կտրուկ աճ: Համեմատաբար ամենացածր արժեքն արձանագրվել է Սյունիքի մարզում՝ («29»), Երևանում («32») և Լոռիում («33»), ամենաբարձրը՝ Արարատում («52»), Վայոց Ձորում («51») և Արմավիրում («51»):



«Անձնական անպաշտպանվածության համաթիվերի» փոփոխություններն՝ ըստ մարզերի և ըստ տարեթվերի առավել մանրամասն ներկայացված են Աղյուսակ 11-ում:


Աղյուսակ 11

«Անձնական անպաշտպանվածության համաթիվը»՝ ըստ մարզերի և տարեթվերի

Մարզեր	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Երևան	-13	-20	-6	32
Արմավիր	21	-11	30	51
Արարատ	24	-1	24	52
Կոտայք	10	3	15	37
Շիրակ	8	-9	19	42
Գեղարքունիք	23	16	7	47

Լոռի	18	-8	5	33
Սյունիք	-30	14	22	29
Արագածոտն	-1	-9	-7	41
Տավուշ	19	17	21	38
Վայոց Ձոր	29	26	22	51

2015-2017թթ. բոլոր մարզերում դրական է եղել միայն «Անհատական մտահոգվածության համաթիվը» (տե՛ս Գծապատկեր 5): 2019թ.-ին բոլոր մարզերում այն նույնպես եղել է դրական՝ դրսևորելով աճ՝ նախորդ տարիների համեմատ: 2019թ.-ին ամենաբարձր դրական արժեքները եղել են Արարատի («62»), Տավուշի («58») և Վայոց Ձորի («57») մարզերում, ամենացածրը՝ Երևան քաղաքում («42») և Արագածոտնում («43»): Տեսանելի լինելու համար նշենք, որ եթե 2017թ.-ին տվյալ համաթիվը Երևանում նույնպես ցածր էր, այդուհանդերձ, կազմում էր «13», այսինքն 2019թ.-ից («42») 29-ով պակաս:



Համեմատելով 2017թ.-ի տվյալների հետ՝ կարող ենք պնդել, որ այս համաթվի արժեքը 2019թ.-ին բոլոր մարզերի համար միջինում աճել է 29-ով: Այս համաթվի արժեքների փոփոխությունները, ըստ մարզերի և տարեթվերի, առավել մանրամասն՝ տե՛ս Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12

«Անհատական մտահոգվածության համաթիվը» ըստ մարզերի և տարեթվերի

Մարզեր	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
--------	--------	--------	--------	--------


Երևան	7	2	13	42
Լոռի	33	11	34	48
Շիրակ	25	19	34	53
Արարատ	30	21	39	62
Արագածոտն	7	21	33	43
Արմավիր	33	22	35	51
Կոտայք	24	25	35	50
Սյունիք	1	33	38	51
Գեղարքունիք	35	35	44	54
Տավուշ	27	39	40	58
Վայոց Ձոր	49	47	35	57

Այսպիսով՝ նախորդ տարիների համեմատ 2019թ.-ին ներկայացված բոլոր համաթվերն («Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ», և նրա բաղկացուցիչ համաթվերը՝ «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ», «Անձնական անպաշտպանվածության համաթիվ», «Անհատական մտահոգվածության համաթիվ») էականորեն աճել են:

Իրականացված հետազոտության տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացներն էական ազդեցություն են ունեցել իրավապահ մարմինների վերաբերյալ հասարակական պատկերացումների փոփոխությունների վրա: 2018թ.-ին տեղի ունեցած թավշյա հեղափոխության ընթացքում, թեև, իրավապահ մարմինները որոշակիորեն կիրառվել են այդ պահին իշխող ուժի կողմից՝ որպես բողոքի ցույցերի մասնակիցների ճնշման միջոց, հեղափոխության արդյունքում, սակայն, նոր իշխանության կողմից իրավապահ մարմինների նկատմամբ վերաբերմունքը հանգեցրեց իրավապահ մարմինների նկատմամբ հասարակության մոտ առկա նախկին պատկերացումների փոփոխությանը: Հասարակական կարծիքի վրա էական նշանակություն են ունեցել նաև հեղափոխության ժամանակահատվածում շրջանառվող լոգունգները՝ «Ոստիկանը մերն է», «մանկության ընկեր Աշոտ-ոստիկանը», «Ոչ բռնի, թավշյա, բաց ձեռքերի հեղափոխություն» և այլն: Հասարակական կարծիքի վրա ազդեցություն է ունեցել ոստիկանների վարքի փոփոխությունը հեղափոխության ընթացքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների ժամանակ, մասնավորապես՝ Սերժ Սարգսյանի հրաժարականի պահին, երբ փողոցներում զրկախառնվում էին քաղաքացիներն ու ոստիկանները: Ոստիկան-քաղաքացի հարաբերությունների նախկին հակասությունների վերաբերյալ պատկերացումները հեղափոխությունից հետո կերպարանափոխվեցին համերաշխության, և դրա վերաբերյալ ՋԼՄ-ներով, սոցիալական ցանցերով և ինտերնետային մամուլում տարածված տեղեկություններն ու կարծիքներն իրենց


ազդեցությունն ունեցան արձանագրված հանրային պատկերացումների դրական փոփոխությունների վրա:

Դիտարկելով 2019թ.-ի «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը»՝ ըստ բնակավայրերի տիպերի՝ պարզ է դառնում, որ այն նույնպես կտրուկ աճել է ինչպես քաղաքային («32»), այնպես էլ գյուղական բնակավայրերում («43») (տե՛ս Գծապատկեր 6):




Հասկանալու համար աճի տեմպերը՝ բոլոր տարիների համար հաշվարկենք գյուղ-քաղաք միջին արժեք: Այսպիսով՝ այն 2015թ.-ին կազմում է «4.5», 2016թ.-ին՝ «-2», 2017թ.-ին՝ «11», իսկ 2019թ.-ին՝ «37.5»: Նախորդ զեկույցում մանրամասնորեն ներկայացվել են 2017-2016թթ. փոփոխությունները և դրանց ենթադրյալ պատճառները (Ապրիլյան քառօրյա պատերազմ, ՊՊԾ գնդի գրավում): Ինչպես տեսնում ենք, նախորդ հետազոտության տվյալների համեմատ, միջինում աճել է 26.5-ով:

Նույն պատկերն է նաև բաղկացուցիչ համաթիվ հանդիսացող **«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ» դեպքում**: Նախորդ 3 ուսումնասիրությունների դեպքում համաթիվն ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում ունեցել է բացասական արժեքներ, սակայն 2019թ.-ին նույնպես կտրուկ աճել: 2019թ.-ին քաղաքային բնակավայրերում արժեքը կազմել է «15», գյուղականում՝ «25»:




Հավելված 1-ում ներկայացված են համաթվի հաշվարկման հիմքում ընկած հարցերի պատասխաններն՝ ըստ բնակավայրի տիպի:

Մյուս բաղկացուցիչը՝ «Անձնական անպաշտպանվածության համաթիվը», 2019 թ.- քաղաքային բնակավայրերում կազմել է «36», իսկ գյուղականում՝ «44» (տե՛ս Գծապատկեր 8):



Տարիների կտրվածքով վերնում նշված միտումը պահպանվում է նաև «Անձնական անպաշտպանվածության համաթիվ» պարագայում (քաղաքային բնակավայրերում 2015 թ.-ին այն եղել է «-1», 2016 թ.-ին՝ «-11», 2017 թ.-ին՝ «4», 2019 թ.-ին՝ «36», իսկ գյուղական բնակավայրերում 2015 թ.-ին այն եղել է «18», 2016 թ.-ին՝ «6», 2017 թ.-ին՝ «20», 2019 թ.-ին՝ «44»):


«Անհատական մտահոգվածության համաթիվը», որը նույնպես բաղկացուցիչ համաթիվ է հանդիսանում, նախորդ ուսումնասիրությունների ընթացքում դրական արժեքներ է ունեցել և՛ գյուղական, և՛ քաղաքային բնակավայրերում: 2019թ.-ին այն քաղաքային բնակավայրերում կազմել է «45», իսկ գյուղական բնակավայրերում՝ «60» (տե՛ս Գծապատկեր 9):



Հետաքրքիր է դիտարկել գյուղ-քաղաք տարբերությունն՝ ըստ տարիների: Այսպես՝ բոլոր տարիներին գյուղական բնակավայրերում արժեքներն ավելի բարձր են, քան քաղաքներում: 2015թ.-ին գյուղական բնակավայրերում արժեքը քաղաքայինից բարձր է 14-ով, 2016թ.-ին՝ 21-ով, 2017թ.-ին՝ 18-ով և 2019թ.-ին՝ 15-ով:


Ամփոփելով վերը ներկայացվածը՝ արձանագրենք, որ քաղաքային բնակավայրերում համաթվերն ավելի ցածր են, քան գյուղական բնակավայրերում: Դրա հավանական պատճառներից կարող է հանդիսանալ այն, որ քաղաքային բնակավայրերում բնակչությունն առավել հաճախ է առնչություն ունենում իրավապահ մարմինների հետ և ավելի ակտիվ է սոցիալ-տնտեսական և քաղաքացիական գործընթացներում, քան գյուղական բնակավայրերի բնակչությունը: Տարեցտարի, սակայն, ըստ բնակավայրերի, համաթվերի տարբերություններն աստիճանաբար նվազում է:

Դիտարկելով «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվն» ըստ սեռային պատկանելության՝ երևում է, որ եթե նախկինում բացասական պատասխաններն առավել գերակշռում էին արական սեռի ներկայացուցիչների մոտ, ապա 2019թ.-ին դրանք հավասարվել են 2 սեռերի մոտ (Գծապատկեր 10.):



Եթե դիտարկենք, թե ինչպես են ըստ սեռի այս համաթվի միջին արժեքները փոփոխվել տարիների կտրվածքով, տեսնում ենք, որ 2015թ.-ին այն եղել է 0, 2016թ.-ին՝ «-7.5», 2017թ.-ին՝ «5.5», 2019թ.-ին՝ «35»:


Բաղկացուցիչ համաթվերից **«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը»** եթե նախորդ հետազոտությունների տվյալներով և՛ կանանց, և՛ տղամարդկանց մոտ ունեցել է բացասական արժեք, ապա 2019թ.-ին՝ այն դրական է: Արական սեռի ներկայացուցիչների մոտ այն կազմել է «20», իգական սեռի մոտ՝ «17» (տե՛ս Գծապատկեր 11.):




Հավելված 1, 2, 3 և 4-ում ներկայացված «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ» հիմքում ընկած հարցերի պատասխանների բաշխումն՝ ըստ սեռային պատկանելության դիտարկելիս՝ տեսնում ենք, որ եթե նախկինում կանանց և տղամարդկանց պատասխանները կոնկրետ հարցերի շուրջ տարբերվում էին,

2019թ.-ին դրանք, գրեթե, չեն տարբերվում կամ չնչին են տարբերվում (Տես Հավելված 1-4):

2019թ. «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» կանանց մոտ կազմել է՝ «39», տղամարդկանց մոտ՝ «38» (տե՛ս Գծապատկեր 12.):



Բոլոր տարիներին «Անհատական մտահոգվածության համաթիվը» ունի դրական արժեք և՛ տղամարդկանց, և՛ կանանց մոտ: Ըստ իգական սեռի ներկայացուցիչների գնահատման՝ այն կազմել է «60», արական սեռի ներկայացուցիչներինը՝ «45» (Գծապատկեր 13.):




Եթե նախորդ համաթվերի արժեքներն ըստ սեռի՝ չնչին էին տարբերվում կամ չէին տարբերվում, ապա «Անհատական մտահոգվածության համաթիվը» դեպքում այն ավելի բարձր է կանանց մոտ: Հետաքրքրական է դիտարկել այդ տարբերությունների դինամիկան՝ ըստ տարիների: Այսպես՝ 2015թ.-ին այն եղել է 0,

2016թ.-ին կանանց մոտ բարձր է եղել 6-ով, 2017թ.-ին՝ նույնպես 6-ով, իսկ 2019թ.-ին՝ 15-ով:

Համաթվերն ըստ սեռերի¹² դիտարկելիս՝ ելնում ենք այն հիպոթեզից, որ արական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են առնչվում իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ, քան իգական սեռի, ուստի՝ տղամարդկանց պատասխանները և դատողություններն ավելի շուտ հիմնված են սեփական փորձի կամ դիտարկումների վրա:

Հետազոտության արդյունքների խաչաձև վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավապահ մարմինների գործունեության գնահատականների վրա ազդեցություն ունի ինչպես բնակավայրի տիպը, այնպես էլ սեռը: 2 դեպքում էլ դա պայմանավորված է այդ մարմինների հետ այս կամ այն կերպ անմիջական առնչության հանգամանքով:


Տարիքի գործոնը նույնպես իր ազդեցությունն ունի «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ» արժեքի վրա (Գծապատկեր 14.):



2019թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» դրական է տարիքային բոլոր խմբի ներկայացուցիչների մոտ: Այն տատանվում է «32-44» միջակայքում: «32» եղել է 61 և ավելի բարձր տարիքային խմբում «44»՝ 18-35 տարեկանների մոտ: Ինչպես երևում է գծապատկերից՝ տարիքի աճին զուգահեռ՝ նվազում է իրավապահ մարմինների կամայականությունների համաթիվը:

¹² Հարցմանը մասնակցել են 63.4% իգական և 36.6% արական սեռի ներկայացուցիչներ (2017թ.):


Բաղկացուցիչ հանդիսացող «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» բոլոր տարիքային խմբերի գնահատմամբ, եթե նախորդ տարիներին ունեցել է միայն բացասական արժեքներ, 2019թ-ին՝ միայն դրական (Գծապատկեր 15.):



Այս համաթիվը տատանվում է 13-ից 23-ի սահմաններում: Այն ամենաբարձր («23») է 61 և ավելի բարձր տարիքային խմբում:

Համաթվի հիմքում ընկած հարցերի պատասխաններն՝ ըստ տարիների կարելի է տեսնել Հավելված 1-4-ում:


Բոլոր տարիքային խմբերի մոտ բոլոր տարիներին «Անհատական մտահոգվածության համաթիվը» դրական է (տ՝ես Գծապատկեր 16.):



Ինչպես երևում է Գծապատկեր 16-ից, այն նույնպես ամենաբարձրն է «61 և ավելի» տարիքային խմբի մոտ՝ «58» և ամենացածրը՝ «26-35» տարիքային խմբի մոտ՝ «42»: Դիտարկենք 2019թ.-ի համաթվի փոփոխությունը 2017թ.-ի հետ՝ ըստ տարբեր տարիքային խմբերի: Այսպես՝ 18-25 տարեկանների մոտ այն աճել է 20-ով, 26-35 տարեկանների մոտ՝ 18-ով, 36-45 տարեկանների մոտ՝ 22-ով, 46-60 տարեկանների մոտ՝ 22-ով և 61 և բարձր տարիք ունեցողների մոտ՝ 25-ով:

Հասկանալու համար, թե ըստ տարիների ինչպես է փոփոխվել համաթիվը, համեմատենք 2019թ.-ի արդյունքները 2017թ. և 2016թ. տվյալների հետ: Նկատելի է, որ 2017թ.-ին այս համաթիվը բոլոր տարիքային խմբերում աճել է, սակայն վերը ներկայացված նվազման, ապա՝ աճի միտումը, չի պահպանվել «61 և ավելի» տարիքային խմբի մոտ՝ 2015թ.-ին՝ «23», 2016թ.-ին՝ «24» և 2017թ.-ին՝ «33», և «26-35 տարեկան» տարիքային խմբում՝ 2015թ.-ին՝ «20», 2016թ.-ին՝ «20» և 2017թ.-ին՝ «31»:

«Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2019թ.-ին նույնպես բոլոր տարիքային խմբերում ունի դրական արժեք և կտրուկ աճ ի տարբերություն նախորդ տարիներին (տես Գծապատկեր 17.):




Տվյալ դեպքում նույնպես տարիքի աճին զուգահեռ՝ նվազում է համաթվի արժեքը: «Անձնական անպաշտպանվածության համաթիվն» ամենաբարձրն է երիտասարդների («44») և ամենացածրը՝ 61 և ավելի բարձր տարիք ունեցողների մոտ («32»):

«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» և նրա բոլոր բաղկացուցիչ համաթվերը բոլոր տարիքային խմբերում կտրուկ աճել են թավշյա հեղափոխությունից հետո, միաժամանակ, որոշ բաղկացուցիչ համաթվերի

արժեքները փոփոխվում են ուղիղ, որոշների դեպքում էլ՝ տարիքին հակադարձ համեմատական կերպով:


«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» բոլոր տարիների համար՝ ըստ հարցվածների կրթության, ներկայացված է Գծապատկեր 18-ում:



«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» կրթական բոլոր խմբերում 2019թ.-ին կտրուկ աճել է նախորդ տարիների համեմատ: Եթե 2017թ.-ին համաթիվը թերի բարձրագույն, բարձրագույն և ետբուհական կրթություն ունեցողների շրջանում ուներ բացասական արժեքներ, 2019թ.-ին՝ այն աճել է: Եթե համեմատենք փոփոխության աստիճանը կրթական տարբեր խմբերի մոտ, ապա տեսնում ենք, որ ետբուհական կրթություն ունեցողների շրջանում այն աճել է «31»-ով, բարձրագույնի դեպքում՝ «31»-ով, թերի բարձրագույն ունեցողների շրջանում՝ «36»-ով, միջին մասնագիտականի՝ «34»-ով, միջնակարգի՝ «24»-ով, թերի միջնակարգի՝ «22»-ով, տարրականի՝ «4»-ով: Առավել մեծ չափով այս համաթիվն աճել է թերի բարձրագույն, ապա միջին մասնագիտական, բարձրագույն և ետբուհական կրթություն ունեցողների շրջանում: Այսպիսով՝ **միջին**

մասնագիտական կրթությունից բարձր կրթություն ունեցողների շրջանում արձանագրում ենք «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» դրական աճի միտում: Չնայած ետբուհական կրթություն ունեցողների շրջանում համաթիվն ամենացածրն է մյուս խմբերի համեմատ, այս խմբի համար համաթվի փոփոխությունը կրկին նախորդ տարվա համեմատ բարձր է՝ նաև մյուս խմբերի հետ համեմատած: Թեև պահպանվում է նախորդ հետազոտությունների այն եզրահանգումը, որ որքան աճում է կրթության մակարդակն, այնքան նվազում «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը», և հակառակը, որքան նվազում է կրթության մակարդակն, այնքան աճում այս համաթվի դրական արժեքները, կրթական մակարդակի աճին զուգահեռ, սակայն, նվազում են իրավապահ մարմինների կամայականությունների վերաբերյալ մտահոգությունները:


Եթե 2017թ.-ի տվյալներով, գրեթե, կրթական բոլոր խմբերում «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվն» ունեցել է բացասական արժեք, ապա 2019թ.-ին այն, գրեթե, բոլոր խմբերում դրական է, բացառությամբ՝ ետբուհական կրթություն ունեցողների (տե՛ս Գծապատկեր 19):



Կրկին համեմատենք 2019թ.-ի և 2017թ.-ի տվյալները: Ետբուհական կրթություն ունեցողների շրջանում 2019թ.-ին այն աճել է «39»-ով, սակայն շարունակում է մնալ բացասական տիրույթում, բարձրագույն կրթություն ունեցողների մոտ՝ «38»-ով, թերի բարձրագույնի՝ «47»-ով, միջին մասնագիտականի՝ «42»-ով, միջնակարգի՝ «30»-ով, թերի միջնակարգի՝ «20»-ով, տարրականի՝ «17»-ով:

Այս բաղկացուցիչ համաթվի հիմքում ընկած հարցերից (իրավապահ մամինների կամայականության և անօրինականության, ինչպես նաև իրավապահ մարմիններին որպես ընդդիմությանը ձնշելու միջոց կիրառել) ստացված պատասխանների վերլուծությունները թույլ են տալիս եզրահանգել, որ որքանով բարձր է հարցվածների կրթության աստիճանն, այդքանով աճում են այդ հարցերի պատասխաններում բացասական գնահատականները:


«Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2017թ.-ին ամենաբարձր բացասական արժեքն ունեցել է «Ետբուհական (զիտ. աստ.)» և «տարրական» (համապատասխանաբար «-30» և «-16») կրթություն ունեցողների խմբերում, սակայն 2019թ.-ին այն բոլոր խմբերի մոտ ունի դրական արժեք (Գծապատկեր 20.):



Նկատենք, որ ընդհանուր համաթիվը 2015թ.-ին եղել է «5», 2016թ.-ին՝ «-7», 2017թ.-ին՝ «9», իսկ 2019թ.-ին՝ «39»: 2019թ.-ին կրթական բոլոր խմբերում էլ կտրուկ աճել է. ետբուհական կրթություն ունեցողների շրջանում այն աճել է «48»-ով, բարձրագույն


կրթություն ունեցողների մոտ՝ «31»-ով, թերի բարձրագույնի՝ «40»-ով, միջին մասնագիտականի՝ «36»-ով, միջնակարգի՝ «26»-ով, թերի միջնակարգի՝ «18»-ով, տարրականի՝ «44»-ով: Կրթական բոլոր խմբերի համար տարբերությունը միջինում կազմում է «34.7»: Հետաքրքրական է, որ եթե նախորդ համաթվերի պարագաներում 2019 և 2017թթ. ուսումնասիրությունների արդյունքների տարբերությունները դիտարկելիս, կրթական մակարդակի նվազմանը զուգահեռ նվազում էր տարբերությունը, «Անձնական անպաշտպանվածության համաթիվ» դեպքում, սակայն, այդ օրինաչափությունը չի դրսևորվում:

Ինչպես 2017թ.-ին, այնպես էլ 2019թ.-ին «Անհատական մտահոգվածության համաթիվը» դրական է բոլոր կրթական խմբերում (Գծապատկեր 21.):




Գծապատկերներ 18-20-ում ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ իրավապահ մարմինների գործունեությունը գնահատող համաթվերի վրա մեծ ազդեցություն ունի հարցվողի կրթության մակարդակը:

«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը»՝ ըստ հարցվածների տնտեսական դրության դիտարկելիս, պարզ է դառնում, որ այս համաթիվը նույնպես բավական աճել է: Եթե 2017թ.-ին այն բոլոր խմբերում ուներ 0-ին մոտ դրական արժեքներ, ապա 2019թ.-ին դրանք մոտ 6 անգամ աճել են (տե՛ս Գծապատկեր 22.):



Այս դեպքում ընդհանուր համաթիվը 2015թ.-ին եղել է «1», 2016թ.-ին՝ «-6», 2017թ.-ին՝ «7», 2019թ.-ին՝ «35»:


«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» նախորդ բոլոր հետազոտությունների ընթացքում բացասական է եղել՝ ըստ հարցվողների տնտեսական դրության ինքնագնահատականի բաշխված բոլոր խմբերում (տե՛ս Գծապատկեր 23.), 2019թ.-ի հետազոտության արդյունքներով, սակայն, այն բոլոր խմբերում ունի դրական արժեք:



Ինչպես տեսնում ենք, 2019թ.-ին այս համաթվի արժեքները տատանվում են 16-21-ի սահմանում: Չկա հստակ ընդգծված միտում՝ կախված հարցվողների տնտեսական դրության ինքնագնահատականից:

Հարկ է նշել, որ այս համաթիվը տարեցտարի աճել է առանձնացված բոլոր խմբերի մոտ, սակայն անհամեմատ մեծ է փոփոխությունը 2019 և 2017թթ.-ի արդյունքների միջև:


«Անհատական մտահոգվածության համաթիվը» բոլոր խմբերում բոլոր տարիներին ունեցել է դրական արժեք: Այն 2019թ.-ին տատանվում է «47-51» սահմանում (տե՛ս Գծապատկեր 24.): Եթե դիտարկում ենք ընդհանուր համաթվի փոփոխությունն՝ ըստ տարիների, տեսնում ենք, որ 2016թ.-ին նախորդ տարվա համեմատ այն նվազել է «3»-ով, 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ աճել է «12»-ով, իսկ 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ՝ «20»-ով:



«Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2019թ.-ին նույնպես կտրուկ աճել է տնտեսական դրության ինքնագնահատման բոլոր տարբերակների համար (տե՛ս Գծապատկեր 25.): Եթե նախորդ հետազոտությունների արդյունքներով տվյալ համաթվի բաղկացուցիչ համաթվի արժեքը աճում էր հարցվողների տնտեսական դրության աճին զուգահեռ, 2019թ.-ի հետազոտության արդյունքներում չի արձանագրվում նման օրինաչափություն:

Դիտարկենք, թե որքանով են աճել յուրաքանչյուր խմբի համար տվյալ համաթվի արժեքները նախորդ տարիների համեմատ: Այսպես՝ «գումարը չի բավարարում


սնունդ գնելու համար» նշողների խմբում տարբերությունը եղել է «32» (2019թ.-ի և 2017թ.), «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» նշողների խմբում՝ «27», «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» նշողների խմբում՝ «38», «գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» նշողների խմբում՝ «20»: Այսինքն այն ամենամեծ չափով աճել է այն խմբում, ովքեր իրենց տնտեսական դրությունը գնահատում են հետևյալ կերպ. «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար»: Այս համաթվի արժեքների աճման միտումն առկա է ուսումնասիրությունների իրականացման գրեթե բոլոր տարիներին (2015-2017թթ.) և խմբերում, բացառությամբ՝ «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» խմբի, ուր առկա է դրական արժեքների համաչափ աճ՝ ըստ տարիների: Մնացած բոլոր խմբերում այս համաթիվը նվազել է 2016թ. 2015թ. համեմատ և 2017թ.-ին նոր սկսել է աճել:



Գծապատկերներ 22-25-ը ցույց են տալիս, որ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ», ինչպես նաև վերջինիս, գրեթե, բոլոր բաղկացուցիչ հանդիսացող համաթիվների արժեքների և հարցվողների տնտեսական դրության միջև առկա է եղել օրինաչափություն՝ տնտեսական ինքնագնահատականի աճին զուգահեռ՝ աճում է համաթիվը: Սակայն 2019թ.-ին այդ միտումը չի պահպանվել:

Համաթիվն ամենաբարձրն է իրենց միջին («գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար») տնտեսական դրություն ունեցող համարողների խմբում:

Գծապատկեր 26-ում ներկայացված է «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվն»՝ ըստ ընտանիքի միջին ամսական եկամտի չափի:




Ինչպես տեսնում ենք, այս համաթիվը 2017 թ.-ին բոլոր խմբերում ունեցել է դրական արժեք, բացառությամբ 350001 դրամից ավելի միջին ամսական եկամտուտի չափ նշող ընտանիքների խմբի՝ «-2»: Սակայն 2019 թ.-ին այն դրական է բոլոր եկամտային խմբերում և նախորդ ուսումնասիրության արդյունքների համեմատ՝ միջինում աճել է մոտ «29»-ով: Նկատենք, որ եթե նախորդ ուսումնասիրության ընթացքում ամենացածր արժեքը եղել է 350001 դրամից ավելի ընտանիքի միջին ամսական եկամտուտի չափ նշողների խմբում, ապա 2019 թ.-ին այն համեմատաբար ցածր է մինչև 35000 դրամ նշողների խմբում:

Գծապատկերից երևում է, որ այն համեմատաբար բարձր է 35.000-350.000 դրամ ընտանիքի միջին ամսական եկամտուտ նշողների խմբերում:


«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» նախորդ տարիների համեմատ զգալիորեն բարձրացել է բոլոր եկամտային խմբերում և ամենաբարձրն է միջին եկամտային խմբերում:

«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» նախորդ հետազոտությունների արդյունքներով բոլոր ենթախմբերում ունեցել է բացասական արժեք, ինչը, սակայն, փոխվել է 2019թ.-ին (տե՛ս Գծապատկեր 27.):




Բոլոր խմբերի մոտ 2019թ. համաթիվը տատանվում է «12-23» միջակայքում: Թեև համաթվի արժեքներն ընդհանուր առմամբ բարձր են, այդուհանդերձ, դրանք ավելի շատ բարձր են 35001-ից մինչև 65000 դրամ ամսական եկամուտ ունեցող ընտանիքների շրջանում: Համեմատաբար ցածր են ամենացածր և ամենաբարձր եկամուտ ունեցողների խմբերում:

«Անհատական մտահոգվածության համաթիվը» բոլոր տարիներին բոլոր խմբերում ունի դրական արժեք (Գծապատկեր 28.):



Այս համաթվի արժեքներն ավելի բարձր են նախորդիվ քննարկվածից: Տվյալ դեպքում համաթվի ամենաբարձր արժեքը 35001-ից մինչև 65000 դրամ ընտանիքի ամսական եկամուտ ունեցողների շրջանում է, իսկ ամենացածրը՝ մինչև 35.000 դրամ նշողների շրջանում:


«Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2019 թ.-ին բոլոր խմբերի մոտ ունի դրական արժեքներ: Տվյալ բաղկացուցիչ համաթիվը նույնպես ամենացածրն է մինչև 35.000 դրամ միջին ամսական եկամուտ ունեցողների խմբում: Նկատենք, որ եթե «Անհատական մտահոգվածության համաթիվը» դեպքում էլ էր այն ամենացածրը, սակայն այդ արժեքն այդքան էլ շատ չէր տարբերվում հաջորդ ավելի ցածր արժեքներից (համաթվի ամենացածր 1-ին և 2-րդ արժեքների միջև տարբերությունը 2 է): Իսկ «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» դեպքում ամենացածր 1-ին և 2-րդ արժեքների միջև տարբերությունը 8 է (Գծապատկեր 29.):



Գծապատկերներ 26-29-ը բացահայտում են իրավապահ մարմինների կամայականության համաթվերի, ինչպես նաև դրա բոլոր բաղկացուցիչ հանդիսացող համաթվերի արժեքների և հարցվողների ընտանիքների ամսական եկամտի չափի միջև առկա օրինաչափությունը: Գրեթե բոլոր դեպքերում ամենաբարձր արժեքները «35001-65000 դրամ» պատասխանը նշողների մոտ են:


Իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ կա որոշակի կախվածություն «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի», ինչպես նաև դրա բաղկացուցիչ համաթվերի և հարցվողների սոցիալ-տնտեսական խավին պատկանելության միջև (տե՛ս Գծապատկեր 30):

Ըստ 2019թ.-ի տվյալների՝ համաթվերը աճում են հարցվողի սոցիալական կարգավիճակի աճին զուգահեռ:




Ինչպես երևում է Գծապատկեր 30-ից՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվն» ամենացածրն է միջինից ցածր խավի ներկայացուցիչների գնահատմամբ՝ «23», և ամենաբարձրն է վերին խավի ներկայացուցիչների գնահատմամբ՝ «40»: Համեմատելով 2017թ.-ի տվյալների հետ՝ տեսնում ենք, որ համաթվերը բոլոր խմբերում էականորեն աճել են:

«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» նախորդ տարիներին բոլոր խավերի մոտ ունեցել է բացասական արժեքներ (տե՛ս Գծապատկեր 31): 2019թ.-ին դրանք աճել են բոլոր խմբերում և ունեն դրական արժեքներ:



Դիտարկենք, թե նախորդ հետազոտության համեմատ որքանով են աճել այս համաթվի արժեքներն իրենց այս կամ այն սոցիալական խավին դասող յուրաքանչյուր խմբում: «Զբաղվոր» խմբում համաթիվն աճել է «35»-ով, «միջինից ցածր խավ»-ում՝ «37»-ով, «միջին խավի ստորին հատված»-ում՝ «42»-ով, «միջին խավի միջին հատված»-ում՝ «32»-ով, «միջին խավի վերին հատված»-ում՝ «35»-ով, «վերին խավ»-ում՝ «48»-ով:

«Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2019թ.-ին ունի դրական արժեք բոլոր սոցիալական խավերի մոտ (տե՛ս Գծապատկեր 32):




Այն ամենաբարձրն է «վերին խավի» մոտ:

Ինչպես երևում է գծապատկերից, շերտավորման (ստրատիֆիկացիայի) աճին զուգահեռ՝ աճում են նաև համաթվի արժեքները:

«Անհատական մտահոգվածության համաթիվը» 2019թ.-ին նույնպես բոլոր խավերի մոտ էականորեն աճել է (տե՛ս Գծապատկեր 33): Համաթվի արժեքները տատանվում են «39-52» միջակայքում: Համաթվի արժեքն ամենաբարձրն է այն հարցվողների մոտ, ովքեր շերտավորման համակարգում իրենց բնորոշել են որպես «միջին խավի միջին հատված» («52») և «վերին խավ» («51»):

Տարբերությունը նախորդ՝ 2017թ. հետազոտության տվյալների հետ էական է. «վերին խավ»-ում համաթիվն աճել է «25»-ով, «միջին խավի վերին հատված»-ում՝ «13»-ով, «միջին խավի միջին հատված»-ում՝ «19»-ով, «միջին խավի ստորին հատված»-ում՝ «24»-ով, «միջինից ցածր խավ»-ում՝ «26»-ով, «չքավոր» խմբում՝ «18»-ով:



Այսպիսով՝ 2017թ. և 2019թ. իրականացված ուսումնասիրությունների հիման վրա արձանագրում ենք, որ ամենամեծ փոփոխությունը տեղի է ունեցել «միջինից ցածր խավ»-ում, իսկ ամենաքիչը՝ «միջին խավի վերին հատված»-ում: Թեև պետք է նշել, որ տվյալ դեպքում քիչ փոփոխություն ասելը խիստ պայմանական է, քանի որ այն զգալիորեն մեծ է նախորդ տարիներին արձանագրված փոփոխությունների համեմատ:

2015թ. և 2019թ. իրականացված ուսումնասիրությունների ընթացքում ստացված տվյալների ամենամեծ փոփոխությունները տեղի են ունեցել ունեցել «վերին խավ»-ում, ամենաքիչը՝ «չքավոր» խավում: Հետաքրքիր է, որ բոլոր տարիներին իրականացված ուսումնասիրությունների (2015-2017թթ. և 2019թ.) արդյունքներով «միջին խավի միջին հատված», «միջին խավի ստորին հատված» և «չքավոր» խմբերում համաթվի արժեքների փոփոխություններն ունեցել են նույնանման օրինաչափությունը՝ 2016թ.-ին նվազել են 2015թ.-ի համեմատ, իսկ 2017թ.-ից սկսած՝ աճել են:

Տեղեկությունների ստացման աղբյուրի ազդեցությունը համաթվերի վրա

2016թ., 2017թ. և 2019թ. իրականացված ուսումնասիրությունների ընթացքում «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» դիտարկվել է նաև ըստ հարցվողների տեղեկությունների ստացման աղբյուրների¹³:

¹³ Հարց. «Հիմնականում որտեղի՞ց եք տեղեկանում Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ»

Նշենք, որ բոլոր տարիներին էլ հարցվողների համար տեղեկության հիմնական աղբյուր են հանդիսացել «Հեռուստատեսությունը» (2016թ.՝ 49.8%, 2017թ.՝ 54.5%, իսկ 2019թ.՝ 50.4%), «Առցանց մամուլը» (2016թ.՝ 22.7%, 2017թ.՝ 20.7%, իսկ 2019թ.-ին՝ 11.8%) և «Սոցիալական կայքերը» (2016թ.՝ 20.7%, իսկ 2017թ.՝ 18.3%, իսկ 2019թ.-ին՝ 32.1%): Մնացած տեղեկատվական աղբյուրներին նախապատվություն տվողների քանակը չի գերազանցել 2.8%-ը և չեն դիտարկվել:

«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» 2019թ.-ին տեղեկատվության տարբեր աղբյուրներից օգտվողների շրջանում ունեցել է հետևյալ արժեքները. Հեռուստատեսություն՝ «38», սոցիալական կայքեր՝ «34» և առցանց մամուլ՝ «33»:

Եթե դիտարկում ենք աճը 2017թ.-ի համեմատ, ապա նկատում ենք, որ հեռուստատեսության պարագայում այն աճել է «23»-ով, սոցիալական կայքերի պարագայում՝ «37»-ով և առցանց մամուլի պարագայում՝ «33»-ով:

Դիտարկելով 2016թ., 2017թ. և 2019թթ.-ի «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվն» ըստ հիմնական տեղեկատվական աղբյուրների՝ տեսնում ենք, որ նախորդ տարիներին այն բոլոր դեպքերում ունեցել է բացասական արժեք, իսկ 2019թ.-ին՝ դրական (ավելի մանրամասն տես Աղյուսակ 13):

Աղյուսակ 13

«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվն» ըստ 3 հիմնական տեղեկատվական աղբյուրների

	Հիմնական տեղեկատվության աղբյուրներ		
	Հեռուստատեսություն	Առցանց մամուլ	Սոցիալական կայքեր
2016թ.	-18	-41	-44
2017թ.	-8	-26	-27
2019թ.	22	12	15

Նույն տարիների տվյալներով «Անհատական մտահոգվածության համաթիվն» ըստ հիմնական տեղեկատվական աղբյուրների դիտարկելիս՝ նկատում ենք, որ դրանք նույնպես զգալիորեն աճել են: Ինչ վերաբերում է «Անձնական անպաշտպանվածության համաթիվ» փոփոխություններին՝ ըստ հիմնական տեղեկատվական աղբյուրների, դրանք առավել մանրամասն ներկայացված են Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14

«Անձնական անպաշտպանվածության համաթիվ» ըստ 3 հիմնական տեղեկատվական աղբյուրների

	Հիմնական տեղեկատվության աղբյուրներ		
	Հեռուստատեսություն	Առցանց մամուլ	Սոցիալական կայքեր
2016թ.	2	-9	-20
2017թ.	16	5	0
2019թ.	37	42	41

Աղյուսակ 14-ը դիտարկելիս՝ պարզ է դառնում, որ «Անձնական անպաշտպանվածության համաթիվն» ունեցել է բացասական արժեքներ միայն 2016թ.-ին առցանց մամուլ և սոցիալական կայքեր նշողների շրջանում, իսկ 2017 և 2019թթ.-ին՝ բոլոր դեպքերում այն ունեցել է դրական արժեք¹⁴:

Այսպիսով համաթվերի ամենամեծ փոփոխությունները տեղի են ունեցել «սոցիալական կայքերը» որպես հիմնական տեղեկատվական աղբյուր համարողների շրջանում, առավել քիչը՝ «հեռուստատեսությունը» որպես հիմնական տեղեկատվական աղբյուր համարողների շրջանում: Հարկ ենք համարում ընդգծել, որ «սոցիալական կայքերը» տեղեկատվության ընտրության ավելի մեծ հնարավորություն են տալիս, քան հեռուստատեսությունը¹⁵:

¹⁴ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ» հաշվարկի հիմքում ընկած ուսումնասիրության արդյունքները կարելի է գտնել Հավելված 1-ում (2019թ.), Հավելված 2-ում (2017թ.), Հավելված 3-ում (2016թ.) և Հավելված 4-ում (2015թ.):

¹⁵ Credibility and Freedom of Choice in Social Media in Relation with Traditional Media, D. C. BALABAN, S. CONSTANTINESCU, M. MUSTĂȚEA, «Jornal of media research», vol.11, Issue 3 (32) November 2018, <https://bit.ly/2JLWfvt>

Ոստիկանության վստահության համաթիվ

Իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա հաշվարկվել է ՀՀ-ում «Ոստիկանության վստահության համաթիվը», որը 2019թ.-ին կազմել է «49»: Նշենք, որ այն 2017թ.-ին

կազմել էր «41», 2016թ.-ին՝ «31», 2015թ.-ին՝ «42»:

Այսպիսով՝ այս համաթիվի

տարբերությունները

նախորդ տարիների

հետ հետևյալն են.

2015թ.-ի համեմատ՝


2016թ.-ին նվազել է

«11»-ով, 2016թ.-ի

համեմատ՝ 2017թ.-ին

աճել է «10»-ով, իսկ

2017թ.-ի համեմատ՝ 2019թ.-ին աճել է «8»-ով (Գծապատկեր 34):



Նախորդ տարիների համեմատ՝ 2019թ.-ին «Ոստիկանության վստահության համաթիվ» բաղադրիչ համաթիվերի արժեքները («Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվ», «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվ», «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվ») նույնպես փոփոխվել են: 2019թ.-ին «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» 2017թ.-ի հետազոտության արդյունքների համեմատ՝ աճել է «11»-ով, 2016թ.-ի համեմատ՝ «17»-ով, իսկ 2015թ.-ի համեմատ՝ «12»-ով (2019թ.՝ «48», 2017թ.՝ «37», 2016թ.՝ «31», 2015թ.՝ «36»), «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» 2019թ.-ին 2017թ.-ի համեմատ՝ աճել է «8»-ով, 2016թ.-ի համեմատ՝ «21»-ով, 2015թ.-ի համեմատ՝ նվազել է «1»-ով (2019թ.՝ «48», 2017թ.՝ «40», 2016թ.՝ «27», 2015թ.՝ «49»), և «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» 2019թ.-ին 2017թ.-ի համեմատ՝ աճել է «6»-ով, 2016թ.-ի համեմատ՝ «17»-ով, իսկ 2015թ.-ի համեմատ՝ «11»-ով (2019թ.՝ «53», 2017թ.՝ «47», 2016թ.՝ «36» 2015թ.՝ «42») (Տես Աղյուսակ 15.):


Աղյուսակ 15

«Ոստիկանության վստահության համաթիվ» 3 բաղկացուցիչ համաթիվերի փոփոխությունը 2015թ. և 2016թ. ընթացքում

Համաթվեր (բաղկացուցիչներ)	2015թ. արժեքներ	2016թ. արժեքներ	2017թ. արժեքներ	2019թ. արժեքներ
«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվ»	36	31	37	48
«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվ»	49	27	40	48
«Ոստիկանության հետ համագործակցության սպառազանցականության համաթիվ»	42	36	47	53

Դիտարկենք «Ոստիկանության վստահության համաթիվը» և նրա բաղկացուցիչ համաթվերն՝ ըստ մարզերի, բնակավայրերի տիպերի, սեռի, տարիքի և այլ սոցիալ-ժողովրդագրական տվյալների:

Գծապատկեր 35-ում պատկերված է 2015-2017թթ. և 2019թ. «Ոստիկանության վստահության համաթիվն»՝ ըստ մարզերի:



Ինչպես երևում է Գծապատկեր 35-ից, բոլոր համաթվերը դիտարկված բոլոր տարիներին (2015-2017թթ. և 2019թ.) ունեն դրական արժեքներ: 2019թ.-ին այդ

համաթիվն ամենացածրն է եղել Սյունիքի մարզում («43») և Երևան քաղաքում («44»): 2017թ.-ին 2 իրար հաջորդող ամենացածր արժեքները նույնպես եղել են Սյունիքի մարզում («38») և Երևան քաղաքում («32»), սակայն եթե 2019թ.-ին այդ արժեքների տարբերությունն ընդամենը «1» միավոր է, ապա 2017թ.-ին եղել է «6» միավոր: 2019թ.-ին համաթիվն ամենաբարձրն է Վայոց Ձորի մարզում («71»), իսկ 2017թ.-ին ամենաբարձրն է եղել Տավուշի («58») և Վայոց Ձորի («57») մարզերում: Նկատենք, որ եթե 2017թ.-ին Տավուշի մարզում համաթիվի արժեքն ամենաբարձրն է եղել, ապա 2019թ.-ին այն նվազել է՝ դառնալով «47»: Սա միակ մարզն է, որտեղ համաթիվը նվազել է՝ նախորդ հետազոտության տվյալների համեմատ: Մյուս բոլոր մարզերում համաթիվի արժեքն աճել է նախորդ տարվա համեմատ: Ընդհանուր համաթիվն աճել է «8»-ով՝ «41»-ից դառնալով «49»: Բոլոր մարզերի համար հաշվարկված համաթիվի միջին արժեքը 2019թ.-ին կազմում է «54», իսկ 2017թ.-ին՝ «46»: Այսինքն միջինում նույնպես տեղի է ունեցել «8»-ի աճ: «Ոստիկանության վստահության համաթիվն»՝ ըստ մարզերի, բոլոր տարեթվերի համար ներկայացված է Աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16

«Ոստիկանության վստահության համաթիվն»՝ ըստ մարզերի և տարեթվերի

Մարզ	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Երևան	31	22	32	44
Շիրակ	38	28	45	50
Լոռի	49	31	44	56
Կոտայք	41	32	45	50
Արագածոտն	32	32	51	54
Արարատ	48	36	48	64
Արմավիր	46	39	46	53
Գեղարքունիք	51	40	41	58
Սյունիք	21	41	38	43
Վայոց Ձոր	58	52	57	71
Տավուշ	56	57	58	47

Եթե դիտարկենք նախորդ տարիների ուսումնասիրությունների արդյունքները, նկատելի է, որ 2015թ.-ի համեմատ՝ 2016թ.-ին տեղի է ունեցել համաթիվի նվազում 8 մարզերում, զգալի չափով աճ գրանցվել է միայն Սյունիքի («20»-ով) (2015թ.՝ «21») մարզում: Այս 2 տարիներին այդ ցուցանիշը նույնն է մնացել Արագածոտնի մարզում, ամենաշատը նվազել՝ Լոռու («18»-ով), Արարատի («12»-ով), Գեղարքունիքի («11»-ով) և Շիրակի («10»-ով) մարզերում:


2016թ.-ի համեմատ՝ 2017թ.-ին այդ համաթիվն էականորեն աճել է գրեթե բոլոր մարզերում (10 մարզում այն աճել է և միայն Սյունիքի մարզում է, որ նվազել է՝ «3»-

ով): Այն ամենաշատն աճել է Արագածոտնի մարզում («19»-ով), Շիրակում («17»-ով), իսկ ամենաքիչը՝ Գեղարքունիքում («1»-ով) և Տավուշում («1»-ով):

2015թ.-ի համեմատ՝ 2019թ.-ին այս համաթիվն աճել է բոլոր մարզերում, բացառությամբ՝ Տավուշի, ուր այն նվազել է 9-ով:

Տարբեր տարիներին հաշվարկված «Ոստիկանության վստահության համաթվերը» նույնպես իրենց վրա կրում են երկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների ազդեցությունը: Այսպես՝ 2016թ.-ին որպես համաթվերի արժեքների նվազումները պայմանավորող գործոն կարելի է նշել 2016թ.-ի հուլիսին ՊՊԾ-ի գնդի գրավման և դրան հաջորդած հասարակական-քաղաքացիական ընդվզումները: Այդ իրադարձություններն իրենց ազդեցությունն են ունեցել հասարակության վստահության մակարդակի վրա՝ զգալիորեն իջեցնելով այն՝ նախորդ տարվա համեմատ: Պետք է նկատել, սակայն, որ հաջորդ տարի (2017թ.-ին) թեև տեղի է ունեցել վստահության աճ, գրեթե մնում է այն նույն մակարդակում, ինչը 2015թ.-ին էր, իսկ որոշ մարզերում նույնիսկ ավելի ցածր: Ինչ վերաբերվում է 2019թ.-ին, ապա համաթվի արժեքի վրա մեծապես իր ազդեցությունն են թողել 2018թ.-ին երկրում տեղի ունեցած հեղափոխական իրադարձությունները, որոնք ընթացել են հասարակության լայն զանգվածների մասնակցությամբ: Թավշյա հեղափոխության արդյունքում տեղի են ունեցել շատ լուրջ օբյեկտիվ փոփոխություններ, որոնք իրենց արտահայտումն են գտել նաև հանրային պատկերացումներում:

«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» 2017թ.-ին ամենացածրն է Երևան քաղաքում՝ «25», այնուհետև Սյունիքի մարզում «32», Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում՝ «38», իսկ 2019թ.-ին՝ Սյունիքում «37» և Երևանում «40» (տե՛ս Գծապատկեր 36): Բոլոր մարզերում 2019թ.-ին համաթիվն էականորեն աճել է՝ 2017թ.-ի համեմատ, բացառությամբ Տավուշի, ուր այն նվազել է «57»-ից՝ դառնալով «51»: 2019թ.-ին բոլոր մարզերի համար համաթվերի միջին արժեքը կազմում է «51», որը 2017թ.-ի միջինից ավել է «9»-ով:



Այս համաթիվն ամենաբարձրն է Վայոց Ձորում («65») և Արարատում («60»):

Ըստ մարզերի հաշվարկված «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվ» փոփոխությունների վերաբերյալ՝ առավել մանրամասն՝ տե՛ս Աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17
«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվն»՝ ըստ մարզերի և տարեթվերի


Մարզ	2015թ.	2016թ. ¹⁶	2017թ.	2019թ.
Երևան	21	21	25	40
Լոռի	51	28	44	52

¹⁶ 2016թ.-ին համաթվերի արժեքները նվազել էին, քանի որ 2016թ. տեղի էր ունեցել ՊՊԾ գնդի գրավումը, ինչին հաջորդած միջադեպերի ընթացքում իրավապահ մարմինների կողմից դրսևորված գործելաճը կրել էր փոփոխություն: «Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների գործունեությունը բնորոշող համաթվերը (2015-2017թթ.)» (ՀՀ իրավապահ մարմինների կամայականության և ՀՀ ոստիկանության վստահության համաթվերը), «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ, զեկույց, Վանաձոր 2018, <https://bit.ly/2y4ZdIR>

Շիրակ	36	32	43	50
Արարատ	50	32	44	60
Արագածոտն	38	32	41	51
Գեղարքունիք	50	37	38	54
Կոտայք	38	38	45	48
Արմավիր	52	40	38	51
Սյունիք	3	40	32	37
Տավուշ	49	50	57	51
Վայոց Ձոր	63	55	52	65

Համեմատելով «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվն» ըստ մարզերի 2019թ.-ին և մինչև հեղափոխությունը՝ (տես Աղյուսակ 17) կարող ենք արձանագրել, որ առանձնակի փոփոխություն է տեղի ունեցել միայն Երևան քաղաքի տվյալներում (եթե 2019թ.-ին՝ «40», ապա 2015թ.-ին՝ 21, 2016թ.-ին՝ 21 2017թ.-ին՝ 25), իսկ այլ մարզերում էական փոփոխությունները բացակայում են:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» 2019թ.-ին նույնպես ամենացածրն է Սյունիքում «40» և Երևան քաղաքում «41» (տե՛ս Գծապատկեր 37):



2015թ.-ի համեմատ 2016թ.-ին այս համաթիվը նվազել է 9 մարզերում. 2016թ.-ի համեմատ՝ 2017թ.-ին՝ միայն 1 մարզում, իսկ 2017թ.-ի համեմատ՝ 2019թ.-ին՝ 4 մարզերում: 2019թ.-ին համաթիվը նվազել է Տավուշի («-14»-ով), Արագածոտնի («-

9»-ով), Սյունիքի («-2»-ով) և Կոտայքի («-1»-ով) մարզերում: Տվյալ համաթվի 4 տարիների արժեքներն՝ ըստ մարզերի առավել մանրամասն՝ տե՛ս Աղյուսակ 18-ում: Համաթվի արժեքն ամենաբարձրն է Վայոց Ձորում («85») և Արարատի («74») մարզերում: Համաթվի միջին արժեքը 2019թ.-ին կազմում է «57», որը նախորդ տարվա բոլոր մարզերի համար հաշվարկված համաթվերի միջինից բարձր է «9»-ով:

Աղյուսակ 18


«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվն»՝ ըստ մարզերի և տարեթվերի

Մարզ	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Երևան	29	10	22	41
Շիրակ	45	23	45	55
Կոտայք	39	27	44	43
Արագածոտն	35	30	63	54
Գեղարքունիք	56	32	44	63
Լոռի	58	33	50	67
Արարատ	51	34	44	74
Արմավիր	49	39	47	51
Սյունիք	26	42	42	40
Վայոց Ձոր	67	59	57	85
Տավուշ	58	75	72	58

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվն»՝ ըստ մարզերի 2019թ.-ի տվյալները համեմատելով մինչև հեղափոխությունն իրականացված ուսումնասիրությունների տվյալների հետ, կարող ենք արձանագրել, որ ոստիկանության հանդեպ վերաբերմունքի ակնհայտ դրական տեղաշարժ տեղի է ունեցել միայն Երևան քաղաքի, Արարտի և Վայոց Ձորի մարզերի բնակիչների վերաբերմունքում:

«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» 2019թ.-ին բոլոր մարզերում նույնպես ունի դրական արժեքներ: Այն ամենացածրն է Տավուշի՝ «33» և ամենաբարձրը՝ Վայոց Ձորի մարզերում «64» (տե՛ս Գծապատկեր 38):

Գծապատկեր 38. 2015-2017թթ.-ի և 2019թ.-ի «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը»՝ ըստ մարզերի



2015թ.-ի համեմատ 2017թ.-ին այս համաթվի արժեքները նվազել են 4 մարզերում՝ Տավուշում՝ «-16», Գեղարքունիքում՝ «-6», Կոտայքում՝ «-2» և Լոռիում՝ «-1»: Մյուս բոլոր մարզերում դրանք աճել են: 2016թ.-ի համեմատ 2017թ.-ին համաթվի արժեքները նվազել են 3 մարզերում՝ Գեղարքունիքում՝ «-12», Տավուշում՝ «-4» և Սյունիքում՝ «-1»: Մյուս բոլոր մարզերում դրանք աճել են: 2017թ.-ի համեմատ 2019թ.-ին այս համաթվի արժեքը նվազել է միայն Տավուշի մարզում՝ «-39», Շիրակի մարզում այն անփոփոխ է մնացել, մյուս բոլոր մարզերում դրանք աճել են:

Այս համաթվի արժեքների փոփոխությունների միտումներն առավել մանրամասն՝ տե՛ս Աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19


«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը»՝ ըստ մարզերի և տարեթվերի

Մարզ	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Շիրակ	34	28	45	45
Լոռի	39	32	38	51
Կոտայք	47	32	45	58
Երևան	44	34	47	51
Արագածոտն	24	35	49	59

Արմավիր	39	37	53	58
Արարատ	44	42	56	58
Սյունիք	33	42	41	53
Վայոց Ձոր	44	42	60	64
Տավուշ	59	47	72	33
Գեղարքունիք	46	52	40	55

2019թ. հետազոտության արդյունքները համադրելով «Ոստիկանության գործունեության գնահատման» և «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի» համաթվերի հետ՝ ակնհայտ է, որ դրական տեղաշարժը մինչև հեղափոխությունը ստացված տվյալների հետ համեմատ: Այնուամենայնիվ, արձանագրում ենք, որ Երևան քաղաքում ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթվի առումով էական փոփոխություն տեղի չի ունեցել: Շարունակելով դիտարկել Աղյուսակ 19-ի տվյալները՝ կարող ենք փաստել, որ, ի տարբերության Երևանյան միտումների, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Սյունիքի մարզերում հակառակ միտում է տեղի ունեցել: Եթե նախորդ 2 («Ոստիկանության գործունեության գնահատման» և «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի» համաթվեր) համաթվերում ակնառու դրական միտումներ չեն գրանցվել, ապա համագործակցության պատրաստակամության համաթվերի պարագայում առկա են էական տեղաշարժեր (Գեղարքունիքի մարզում 2019թ. ի համեմատ՝ 2017թ.-ին աճել է «15»-ով, Լոռու մարզում՝ «13»-ով, Կոտայքի մարզում՝ «13»-ով և Սյունիքի մարզում՝ «12»-ով):


«Ոստիկանության հանդեպ վստահության համաթիվը» դիտարկելով ըստ բնակավայրերի տիպերի՝ կարող ենք նշել, որ բոլոր տարիներին ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում այն ունի դրական արժեք (տե՛ս Գծապատկեր 39): Միևնույն ժամանակ քաղաքային բնակավայրերում այն ավելի ցածր է («33»), քան գյուղական բնակավայրերում («48»):




Գծապատկեր 39.1-ից երևում է, որ «Ոստիկանության վստահության համաթիվը» 2015թ.-ի համեմատ՝ 2016թ.-ին գյուղական բնակավայրերում ավելի քիչ է նվազել («3»-ով), քան քաղաքային բնակավայրերում («11»-ով): Իսկ 2016թ.-ի համեմատ 2017թ.-ին գյուղական բնակավայրերում ավելի քիչ է աճել («2»-ով), քան քաղաքային բնակավայրերում («8»-ով): 2019թ.-ին նույնպես այն ավելի շատ աճել է քաղաքային բնակավայրերում («15»-ով): Իսկ գյուղական բնակավայրերում աճել է «11»-ով:

Եթե դիտարկում ենք համաթվի փոփոխությունն՝ ըստ տարիների, կարող ենք տեսնել, որ 2015թ.-ի համեմատ՝ 2016թ.-ին համաթիվը միջինում նվազել է «-7»-ով, 2016թ.-ի համեմատ՝ 2017թ.-ին աճել է «5»-ով, 2017թ.-ի համեմատ՝ 2019թ.-ին աճել է «13»-ով:

2019թ. -ին «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» մինչև հեղափոխությունն իրականացված հետազոտությունների տվյալներն աճել են թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում, սակայն քաղաքային բնակավայրերում աճն ավելի մեծ է եղել (աճել է «12»-ով), քան գյուղական բնակավայրերում (աճել է «7»-ով) (տե՛ս Գծապատկեր 39.2):




«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը». 2019թ.-ին ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքներում համաթվերը զգալիորեն աճել են ինչպես 2017թ.-ի, այնպես էլ 2016 և 2015թթ. համեմատ (տե՛ս Գծապատկեր 40):



Այսպես՝ եթե ըստ տարիների դիտարկենք փոփոխությունները քաղաքային բնակավայրերում, ապա տեսնում ենք, որ 2015թ.-ի համեմատ՝ 2016թ.-ին համաթիվը նվազել է «-19»-ով, 2016թ.-ի համեմատ՝ 2017թ.-ին աճել է «17»-ով, իսկ 2017թ.-ի համեմատ՝ 2019թ.-ին աճել է «14»-ով: Գյուղական բնակավայրերում 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ համաթիվը նվազել է «-4»-ով, 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ կրկին նվազել է «-16»-ով, իսկ 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ աճել է «28»-ով:

2019թ. «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» քաղաքային բնակավայրերում ավելի ցածր է («51»), քան գյուղական բնակավայրերում («57») (տե՛ս Գծապատկեր 41):




Այս համաթվի արժեքը 2016 թ.-ին 2015թ.-ի համեմատ նվազել է քաղաքային համայնքներում («-8»), իսկ գյուղական համայնքներում, ընդհակառակը, աճել է

(«2»-ով): 2017թ.-ին այս համաթիվը բնակավայրերի 2 տիպերում էլ աճել է՝ ինչպես 2016թ.-ի, այնպես էլ 2015թ.-ի համաթվի արժեքների համեմատ: 2019թ.-ին համաթիվը բնակավայրերի 2 տիպերում էլ աճել է՝ քաղաքային բնակավայրերում «5»-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ «9»-ով, այդպիսով այն միջինում 2017թ.-ի համեմատ աճել է «7»-ով: Համեմատության համար ասենք, որ 2016թ.-ի համեմատ՝ 2017թ.-ին միջինում եղել է «9»-ով աճ, իսկ 2015թ.-ի համեմատ՝ 2016թ.-ին միջինում եղել է «3»-ով նվազում:


Նշենք, որ բոլոր համաթվերը բոլոր տարիներին քաղաքային բնակավայրերում ավելի ցածր են, քան գյուղական բնակավայրերում: Դրա հավանական պատճառներից կարող են հանդիսանալ բնակավայրերի բնակիչների ենթամշակութային տարբերությունները, ոստիկանության հետ առնչության փորձը:

Գծապատկեր 42.1-ում ներկայացված է 2015-2017թթ. և 2019թ. «Ոստիկանության վստահության համաթիվն»՝ ըստ սեռի:




Ինչպես տեսնում ենք, 2019թ.-ին «Ոստիկանության վստահության համաթիվն» արական սեռի ներկայացուցիչների կողմից գնահատվել է «45», իսկ իգական սեռի ներկայացուցիչների կողմից՝ «54»: 2017թ.-ին համաթիվն արական սեռի ներկայացուցիչների կողմից գնահատվել է «33», իգական սեռի ներկայացուցիչների կողմից՝ «46»: 2019թ.-ի այս համաթիվը, մինչև հեղափոխությունն իրականացված հետազոտությունների տվյալների համեմատ, ակնհայտորեն աճել է արական սեռի ներկայացուցիչների մոտ («12»-ով), իսկ իգական սեռի ներկայացուցիչների մոտ՝ համեմատաբար ավելի քիչ («8»-ով):

Համեմատելով համաթվի արժեքներն՝ ըստ սեռի բոլոր տարիների համար, նկատելի է, որ արական սեռի ներկայացուցիչների մոտ բոլոր տարիներին ստացված արժեքներն ավելի ցածր են, քան իգական սեռի ներկայացուցիչների:




Տղամարդկանց շրջանում համաթիվը 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ աճել է «12»-ով, 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ՝ «8»-ով, 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ նվազել է «-12»-ով: Կանանց շրջանում համաթիվը 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ աճել է «8»-ով, 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ՝ «11»-ով, 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ նվազել է «-6»-ով:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» 2019թ.-ին արական սեռի ներկայացուցիչների շրջանում կազմել է «49», իգական սեռի ներկայացուցիչների շրջանում՝ «54»: Դիտարկենք ընդհանուր համաթիվի փոփոխություններն՝ ըստ տարիների. 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ այն աճել է «8»-ով, 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ՝ «13»-ով, 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ նվազել է «-22»-ով: Ավելի մանրամասն՝ տե՛ս Գծապատկեր 43:




Գծապատկեր 44-ում ներկայացված է «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվն» ըստ սեռի՝ բոլոր տարիների համար: Ինչպես տեսնում ենք, 2019թ.-ին տղամարդկանց շրջանում այն «42» է, կանանց շրջանում՝ «58»: Տղամարդկանց շրջանում համաթիվը 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ աճել է «8»-ով, 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ՝ «11»-ով, 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ նվազել «-13»-ով: Կանանց շրջանում համաթիվը 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ աճել է «4»-ով, 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ՝ «11»-ով, 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ նվազել «-6»-ով:



Հետաքրքրական է, որ համագործակցության պատրաստակամությունը գնահատող համաթիվը հիմնականում ավելի բարձր է իգական սեռի ներկայացուցիչների շրջանում: Գծապատկեր 44-ից ակնհայտ է, որ 2019թ.-ին այն ավելի շատ աճել է արական սեռի ներկայացուցիչների մոտ՝ «8»-ով, իգական սեռի ներկայացուցիչների մոտ՝ «4»-ով: Չնայած այդ մեծ դրական աճին՝ միևնույնն է՝ արական սեռի ներկայացուցիչների շրջանում 2019թ.-ին համաթիվը դարձել է այնքան, որքան եղել է իգական սեռի ներկայացուցիչների շրջանում՝ մինչև հեղափոխությունը:


Գծապատկեր 45-ում պատկերված է «Ոստիկանության վստահության համաթիվն»՝ ըստ տարիքային տարբեր խմբերի: Ինչպես երևում է գծապատկերում, 2019թ.-ին բոլոր տարիքային խմբերի մոտ համաթիվերն աճել են:



Գծապատկեր 45-ից երևում է, որ տվյալ համաթիվն ամենաբարձրն է «61 և ավելի» («55»), ամենացածրը՝ «18-25 տարեկան» տարիքային խմբերում: Ընդհանուր համաթիվը 2019 թ.-ին՝ 2017 թ.-ի համեմատ աճել է «8»-ով, 2017 թ.-ին՝ 2016 թ.-ի համեմատ՝ «8»-ով, իսկ 2016 թ.-ին՝ 2015 թ.-ի համեմատ նվազել «9»-ով:

2019 թ.-ին համաթիվն ամենաշատն աճել է «18-25 տարեկան» տարիքային խմբում («12»-ով):


«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» 2019 թ.-ին կրկին ամենաբարձրն է «61 և ավելի» տարիքային խմբում («56»), ամենացածրը՝ «18-25 տարեկան» և «36-45 տարեկան» տարիքային խմբերում, որտեղ երկուսում էլ ունի «48» արժեքը (տես Գծապատկեր 46):




Ընդհանուր համաթիվը 2019 թ.-ին՝ 2017 թ.-ի համեմատ աճել է «16»-ով, 2017 թ.-ին՝ 2016 թ.-ի համեմատ՝ «6»-ով, իսկ 2016 թ.-ին՝ 2015 թ.-ի համեմատ նվազել «-5»-ով: 2019 թ.-ին համաթիվն ամենաշատն աճել է «61 և ավելի» տարիքային խմբում («20»-ով):

2019 թ.-ին «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» 2017 թ.-ի համեմատ՝ բոլոր տարիքային խմբերում աճել է՝ շարունակելով նախորդից եկող աճի միտումը: Այն ամենաբարձրն է «61 և ավելի» տարիքային խմբում («60»), ամենացածրը՝ «18-25 տարեկան» տարիքային խմբում («38») (տե՛ս Գծապատկեր 47.1):


Ընդհանուր համաթիվը 2019 թ.-ին՝ 2017 թ.-ի համեմատ աճել է «8»-ով, 2017 թ.-ին՝ 2016 թ.-ի համեմատ՝ «13»-ով, իսկ 2016 թ.-ին՝ 2015 թ.-ի համեմատ նվազել «-22»-ով: 2019 թ.-ին համաթիվն ամենաշատն աճել է «36-45 տարեկան» տարիքային խմբում («15»-ով): Ամենաքիչն այս համաթիվն աճել է «18-25 տարեկան» տարիքային խմբում:



2019թ.-ին «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը», համեմատելով նախքան հեղափոխությունն այդ համաթիվի արժեքի հետ, ակնհայտ է, որ ամենամեծ աճը գրանցվել է «26-35 տարեկան» տարիքային խմբում, ամենացածր աճը՝ «36-45 տարեկան» տարիքային խմբում: Այս համաթիվը բոլոր տարիքային խմբերում 2019թ. գրանցել է դրական աճ (տե՛ս Գծապատկեր 47.2):



Գծապատկեր 48-ում ներկայացված է 2015-2017թթ.-ի և 2019թ.-ի «Ոստիկանության վստահության համաթիվը»՝ ըստ հարցվողների կրթության:




Ինչպես տեսնում ենք, 2019 թ.-ին համաթվի ամենաբարձր արժեքներն ստացվել են «Տարրական» և «Թերի միջնակարգ» կրթություն ունեցող հարցվողների խմբերից: Երկուսում էլ համաթիվը «56» է: Ամենացածրը «Ետբուհական (գիտ. աստիճան)» կրթություն ունեցողների շրջանում է՝ «33»: Ինչպես տեսնում ենք գծապատկերից, որոշակի միտում է նկատվում վստահության աստիճանի և կրթական մակարդակի միջև եղած կապի: Այսպիսով՝ 2019 թ.-ի տվյալներով՝ **կրթական մակարդակի աճին զուգահեռ՝ նվազում է վստահության աստիճանը:**

Ընդհանուր համաթիվը 2019 թ.-ին՝ 2017 թ.-ի համեմատ աճել է «8»-ով, 2017 թ.-ին՝ 2016 թ.-ի համեմատ՝ «8»-ով, 2016 թ.-ին՝ 2015 թ.-ի համեմատ նվազել «-9»-ով:

2019 թ.-ի համաթիվը 2017 թ.-ի համեմատ՝ «Ետբուհական (գիտ. աստիճան)» խմբում աճել է «17»-ով, «Բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում «11»-ով, «Թերի բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում՝ «15»-ով, «Միջին մասնագիտական (տեխնիկում)» կրթություն ունեցողների շրջանում՝ «12»-ով, «Միջնակարգ (10-12-ամյա)» կրթություն ունեցողների մոտ՝ «5»-ով, «Թերի միջնակարգ» կրթություն ունեցողների մոտ՝ «17»-ով և «Տարրական» կրթություն ունեցողների մոտ՝ «18»-ով: Այսինքն՝ ամենաշատ փոփոխությունը եղել է «Տարրական» կրթություն ունեցողների շրջանում:

«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» 2019թ.-ին ամենացածրն է ամենաբարձր կրթական մակարդակ ունեցողների շրջանում «17» (տե՛ս Գծապատկեր 49):




Այն «Ետբուհական (գիտ. աստիճան)» կրթություն ունեցողների շրջանում կազմել է «14»: Համաթիվն ամենաբարձրն է «Թերի միջնակարգ» կրթություն ունեցող հարցվողների խմբում «54»: Ինչպես տեսնում ենք գծագրից՝ տվյալ դեպքում միջին և բարձր արժեքները կենտրոնացված են կրթական միջին մակարդակներում՝ միջնակարգ, միջին մասնագիտական և թերի բարձրագույն:


Հնդհանուր համաթիվը 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ աճել է «11»-ով, 2017թ.-ին՝ 2016թ.-ի համեմատ՝ «6»-ով, 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ նվազել «-5»-ով:

2019թ.-ին այս համաթիվը 2017թ.-ի համեմատ «Ետբուհական (գիտ. աստիճան)» խմբում աճել է «4»-ով, «Բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում՝ «12»-ով, «Թերի բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում՝ «18»-ով, «Միջին մասնագիտական (տեխնիկում)» կրթություն ունեցողների շրջանում՝ «11»-ով, «Միջնակարգ (10-12-ամյա)» կրթություն ունեցողների մոտ՝ «9»-ով, «Թերի միջնակարգ» կրթություն ունեցողների մոտ՝ «16»-ով, իսկ «Տարրական» կրթություն ունեցողների մոտ այն նվազել է «-3»-ով: Այսինքն՝ ամենաշատ փոփոխությունը եղել է «Թերի բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում: Այս համաթիվի, ինչպես և «Ոստիկանության վստահության համաթիվի» պարագայում, նկատվում է նույն միտումը՝ կրթական մակարդակի աճին զուգահեռ՝ նվազում է «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվի» աստիճանը:

«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» 2019թ.-ին ամենաբարձրն է «Ետբուհական (զիտ. աստիճան)» կրթություն ունեցողների շրջանում «74», ամենացածրը՝ «միջնակարգ (10-12-ամյա)» կրթություն ունեցողների շրջանում «46» (տե՛ս Գծապատկեր 50):




Տվյալ դեպքում՝ 2019թ.-ին համաթվի միջին արժեքը կազմում է «56», որը նախորդ տարվա միջին արժեքից ավելի է «17»-ով: 2019թ.-ի համաթիվը 2017թ.-ի համեմատ՝ «Ետբուհական (զիտ. աստիճան)» խմբում աճել է «37»-ով, «Բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում՝ «7»-ով, «Թերի բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում՝ «3»-ով, «Միջին մասնագիտական (տեխնիկում)» կրթություն ունեցողների շրջանում՝ «3»-ով, «Միջնակարգ (10-12-ամյա)» կրթություն ունեցողների մոտ՝ «1»-ով, «Թերի միջնակարգ» կրթություն ունեցողների մոտ՝ «35»-ով, «Տարրական» կրթություն ունեցողների մոտ՝ «34»-ով: Այսինքն՝ ամենաշատ փոփոխությունը եղել է «Ետբուհական (զիտ. աստիճան)», «Թերի միջնակարգ» և «Տարրական» կրթական խմբերում:



Գծապատկեր 51-ից երևում է, որ «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» 2019թ.-ին ամենաբարձրն է «Տարրական» կրթություն ունեցողների մոտ՝ «73», ամենացածրը՝ «Ետբուհական (գիտ. աստիճան)» կրթություն ունեցողների մոտ՝ «11»: Հետաքրքրական է, որ այստեղ ավելի բարձր արժեքներ նկատվում են ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողների մոտ և հակառակը:


Տվյալ դեպքում 2019թ.-ին համաթվի միջին արժեքը կազմում է «50», որը նախորդ տարվա միջին արժեքից աճել է «14»-ով: 2019թ.-ին համաթիվը 2017թ.-ի համեմատ «Ետբուհական (գիտ. աստիճան)» խմբում աճել է «11»-ով, «Բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում՝ «16»-ով, «Թերի բարձրագույն» կրթություն ունեցողների շրջանում՝ «23»-ով, «Միջին մասնագիտական (տեխնիկում)» կրթություն ունեցողների շրջանում՝ «21»-ով, «Միջնակարգ (10-12-ամյա)» կրթություն ունեցողների մոտ՝ «6»-ով, «Թերի միջնակարգ» կրթություն ունեցողների մոտ նվազել է «-2»-ով, «Տարրական» կրթություն ունեցողների մոտ աճել «23»-ով: Այսինքն՝ ամենաշատ փոփոխությունը եղել է «Ետբուհական (գիտ. աստիճան)», «Թերի բարձրագույն» և «Տարրական» կրթական խմբերում:

Դիտարկելով 2019թ.-ին «Ոստիկանության վստահության համաթիվն»՝ ըստ հարցվածների տնտեսական դրության (տե՛ս Գծապատկեր 52), կարելի է նկատել, որ բոլոր խմբերում այն ունի դրական աճ: Համաթվի առավելագույն արժեքը «Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» և «Գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» խմբերում՝ «53»:




Ըստ տարիների փոփոխությունը հասկանալու համար՝ հաշվարկվել են միջին արժեքներ: 2019 թ.-ին միջին արժեքը կազմում է «51», 2017 թ.-ին՝ «42», 2016 թ.-ին՝ «32» և 2015 թ.-ին՝ «40»: Ինչպես երևում է ներկայացված թվերից, այստեղ նույնպես պահպանվում է այն միտումը, որ 2016 թ.-ին տեղի է ունեցել նվազում՝ 2015 թ.-ի համեմատ, 2017 թ.-ին՝ աճ 2016 թ.-ի համեմատ և 2019 թ.-ին կրկին աճ՝ 2017 թ.-ի համեմատ: Ըստ որում՝ 2017 և 2015 թթ.-ների արժեքները միմյանց մոտ են, իսկ 2016 և 2019 թթ.-ների արժեքները՝ համապատասխանաբար պակաս և ավել են «10»-ով:

«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվ» առավելագույն արժեքը «Գումարը փոխարարում է միայն սնունդ գնելու համար» և «Գումարը փոխարարում է սնունդ և հագուստ գնելու համար» խմբերում է՝ «50» (տե՛ս Գծապատկեր 53):




Ըստ տարիների փոփոխությունը հասկանալու համար՝ հաշվարկվել են միջին արժեքներ: 2019 թ.-ին միջին արժեքը կազմում է «48», 2017 թ.-ին՝ «38», 2016 թ.-ին՝ «33» և 2015 թ.-ին՝ «37»: Ինչպես երևում է ներկայացված թվերից, այստեղ նույնպես պահպանվում է այն միտումը, որ 2016 թ.-ին 2015 թ.-ի համեմատ տեղի է ունեցել նվազում, 2017 թ.-ին՝ 2016 թ.-ի համեմատ՝ աճ և 2019 թ.-ին կրկին աճ՝ 2017 թ.-ի համեմատ: Ըստ որում՝ 2017 և 2015 թթ.-ների արժեքները կրկին միմյանց մոտ են, իսկ 2016 թ.-ին դրանցից փոքր-ինչ ցածր, իսկ 2019 թ.-ին՝ կրկին «10»-ով ավել 2015 և 2017 թթ. արժեքներից:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» 2019 թ.-ին տատանվում է «48-56» միջակայքում (Գծապատկեր 54):




Միջին արժեքը 2019թ.-ի համար կազմում է «52», 2017թ.-ին՝ «42», 2016թ.-ին՝ «28» և 2015թ.-ին՝ «42»: Այն ամենաբարձրն է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» խմբի մոտ («56»), թեև մոտ է «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» խմբի համաթվին՝ «54»: Եթե դիտարկում ենք 2019թ.-ին 2017թ.-ի փոփոխության չափը, ապա համաթիվն ամենաշատն աճել է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» խմբի մոտ՝ («24»-ով) և «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» խմբի մոտ՝ («16»-ով)

«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» 2019թ.-ին ամենաբարձրն է «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» խմբում. այն կազմում է «56» և իր արժեքով մոտ է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» խմբի համաթվի արժեքին՝ «54» (Գծապատկեր 55): Միջին արժեքը 2019թ.-ին կազմում է «53», 2017թ.-ին՝ «47», 2016թ.-ին՝ «36», 2015թ.-ին՝ «42»: Հետաքրքրական է, որ համաթիվը բոլոր խմբերում 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ, աճել է՝ բացառությամբ «գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» խմբի, ուր այն նվազել է «4»-ով:




2017 թ. հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ընտանիքի միջին ամսական եկամտի և «Ոստիկանության վստահության համաթիվ» միջև կա որոշակի կախվածություն՝ համաթիվերն ավելի բարձր են միջին եկամտային խմբերում (համապատասխան՝ տվյալ ուսումնասիրության համար կիրառվող եկամտային խումբը բնորոշող սանդղակի) և ցածր են ամենացածր և ամենաբարձր եկամտային խմբում (տե՛ս Գծապատկեր 56):



Գծապատկեր 56-ում ներկայացված է, թե որքան են կազմում համաթիվերը ընտանիքի միջին ամսական եկամտի տարբեր չափ ունեցող հարցվողների շրջանում: Ինչպես տեսնում ենք, 2019 թ.-ին դրանք բոլոր խմբերում աճել են: Համաթիվի արժեքներն ամենաբարձրն են 35.000-150.000 դրամ եկամուտ նշող խմբերում («54», «55»), ամենացածրը՝ մինչև 35.000 դրամ և 350.001 դրամից ավել եկամուտ նշողների խմբերում («45», «46»): Ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ համաթիվն ամենաշատն աճել է հենց այն խմբերում, ուր այն ամենաբարձրն է՝ «35001-65000 դրամ» և «65001-150.000 դրամ» նշողների շրջանում: Երկուսում էլ համաթիվն աճել է «13»-ով:


«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» 2019 թ.-ին կրկին ամենաբարձրն է «35001-65000 դրամ» («53») և «65001-150.000 դրամ» («50») եկամուտ ունեցողների խմբերում: Համաթիվն ամենացածրն է «մինչև 35.001 դրամ» եկամուտ ունեցողների շրջանում («42»): 2017 թ.-ի համեմատ համաթիվը բոլոր խմբերում էականորեն աճել է: Ամենաշատն աճել է «350001 դրամից ավել» եկամուտ ունեցողների շրջանում՝ «24»-ով (Գծապատկեր 57):




Ինչպես արդեն նկարագրվել է, համաթիվերը 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ նվազել էին, իսկ 2017թ.-ին աճել էին՝ գրեթե հավասարվելով կամ մոտենալով 2015թ.-ի արժեքներին: 2019թ.-ին համաթիվերն էլ ավելի են աճել՝ գերազանցելով նախորդ բոլոր տարիների արժեքներին:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» նույնպես ամենաբարձրն է «35001-65000 դրամ» («60») և «65001-150.000 դրամ» («57») եկամուտ ունեցողների խմբերում, ամենացածրն է «350001 դրամից ավելին» եկամուտ ունեցողների խմբում՝ «40» (Գծապատկեր 58):


2017թ.-ի համեմատ համաթիվը բոլոր խմբերում էականորեն աճել է: Ամենաշատն աճել է «350001 դրամից ավել»՝ «22»-ով, «65001-150000 դրամ»՝ «21»-ով և «35001-65000 դրամ»՝ «15»-ով, եկամուտ ունեցողների շրջանում:



«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» 2019 թ. -ին ամենաբարձրն է «350001 դրամից ավել» միջին ամսական եկամուտ ունեցողների շրջանում՝ «55», ինչը պահպանվել է 2017 թ.-ի ուսումնասիրությունից: Համաթիվն ամենացածրն է «մինչև 35001 դրամ» եկամուտ ունեցողների շրջանում՝ «40» (Գծապատկեր 59):




Դիտարկելով հետազոտությունների արդյունքներում «Ոստիկանության վստահության համաթիվն»՝ ըստ հարցվածների խավի պատկանելության՝ նշենք, որ բոլոր համաթվերը, նախորդ տարիների համեմատ, զգալիորեն աճել են բոլոր խմբերում (Գծապատկեր 60):




2019թ.-ին համաթիվն ամենաբարձրն է «միջին խավի վերին հատվածին» («55») և «Վերին խավին» («54») իրենց դասող հարցվածների խմբերում: Բոլոր խմբերի մոտ 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ համաթվերն աճել են, բացառությամբ՝ «Վերին խավի»: Նրանց մոտ այս համաթիվը 2015թ.-ին եղել է «26», 2016թ.-ին աճել է «7»-ով, իսկ 2017թ.-ին նվազել «5»-ով, այնուհետև 2019թ.-ին աճել է «26»-ով: Ի դեպ, այս խմբում է, որ 2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ տեղի է ունեցել համաթվի ամենամեծ աճը: Համաթիվը 2019թ.-ին ամենացածրն է իրենց «միջինից ցածր» («42») և «չքավոր» («43») խավերին դասող հարցվողների մոտ:

«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» 2019թ.-ին ամենաբարձր արժեքն ունի կրկին «Միջին խավի վերին հատվածին» («54») և «Վերին խավին» («53») իրենց դասող հարցվածների խմբերում: Այն ամենացածր արժեքն ունի «Միջինից ցածր խավ» («36») և «Չքավոր» («38») խավերին իրենց դասող հարցվողների մոտ (Գծապատկեր 61):




2019 թ.-ին՝ 2017 թ.-ի համեմատ համաթիվը բոլոր խմբերում աճել է: Կտրուկ աճ դրսևորվել է «Վերին խավի» մոտ, որտեղ համաթիվն աճել է «25»-ով: Նշենք, որ համաթիվը նախորդ տարվա համեմատ, միջինում աճել է «13»-ով:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվի» 2019 թ.-ին նույնպես ամենաբարձրն է եղել և «Վերին խավի» մոտ՝ «66», իսկ ամենացածրը՝ «Միջինից ցածր խավի» մոտ՝ «39»: Նախորդ տարվա համեմատ համաթիվն ամենաշատն աճել է «Վերին խավի» մոտ՝ «36»-ով, ապա «Միջին խավի ստորին հատված» խմբի մոտ՝ «28»-ով (Գծապատկեր 62):



«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» 2019թ.-ին ամենացածրն է «Վերին խավ» խմբում՝ «43» և «չքավոր» խմբում՝ «45», ամենաբարձրը՝ «միջին խավի ստորին հատվածում»՝ «55» (տե՛ս Գծապատկեր 63):



2019թ.-ին՝ 2017թ.-ի համեմատ համաթիվը բոլոր խմբերում աճել է: Այն ամենաշատն աճել է «Վերին խավ» նշողների խմբում՝ «15»-ով: 2019թ.-ին համաթիվի արժեքները բոլոր խմբերում բարձր են՝ նախորդ տարիների համեմատ: Ինչպես երևում է գծապատկերից, համաթիվն ամենաբարձր արժեքներն ունի ըստ խավի բաշխման միջին հատվածներում, իսկ ստորին և վերին հատվածներում այն նվազում է: Վերոնշյալը հիմք է տալիս փաստելու, որ խավի պատկանելությունն ազդեցություն ունի «Ոստիկանության վստահության համաթիվի» վրա:

Դիտարկելով 2019, 2017 և 2016թթ.-ին «ոստիկանության վստահության համաթիվը» և իր բաղկացուցիչ հանդիսացող համաթվերն՝ ըստ հիմնական տեղեկատվական աղբյուրների՝ պարզ է դառնում, որ դրանք ունեն դրական արժեքներ բոլոր հիմնական տեղեկատվական աղբյուրների (հեռուստատեսություն, առցանց մամուլ և սոցիալական կայքեր նշողների շրջանակում) պարագայում¹⁷:


¹⁷ «Ոստիկանության վստահության համաթիվի» հաշվարկի հիմքում ընկած ուսումնասիրության արդյունքները կարելի է գտնել Հավելված 5-ում (2019թ.), Հավելված 6-ում (2017թ.), Հավելված 7-ում (2016թ.) և Հավելված 8-ում (2015թ.):

Իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետություն

Վերաբերմունքն իրավապահ մարմինների նկատմամբ

2015, 2016, 2017 և 2019թթ.-ի հետազոտությունների ընթացքում, իրավապահ մարմինների գործունեությունն ավելի ընդգրկուն և բազմակողմանի գնահատելու նպատակով, դիտարկվել են նաև մի շարք այլ հարցեր:


Հարցվողները պատասխանել են այն հարցին, թե որքանով է Հայաստանի համար կարևոր իրավապահ մարմինների դերը¹⁸: Պատասխանները ներկայացված են Գծապատկեր 64-ում:



Գծապատկեր 64-ից երևում է, որ որպես ընդհանուր օրինաչափություն, հասարակությունը կարևորում է իրավապահ մարմինների դերը: Միննույն ժամանակ 2015-2017թթ.-ի ընթացքում հասարակության մոտ այս հարցի վերաբերյալ դիրքորոշումներն էական փոփոխություններ են կրել: 2015 և 2017թթ.-ների հարցի պատասխանները, գրեթե, միանման են եղել, դրանք դեպի բացասական փոփոխություն են կրել 2016թ.-ին, իսկ 2019թ.-ին փոխվել են դեպի դրականը՝ էականորեն գերազանցելով 2015 և 2017թթ.-ների դրական պատասխաններին: Եթե նախկինում բնակչությունն իրավապահ մարմիններին դիտարկում էր որպես իշխանությունների կողմից ընդդիմադիրներին ճնշելու միջոց, 2019թ.-ի տվյալներով՝ նման պատկերացումն այլևս բացակայում է:

¹⁸ Հարց՝ «Ըստ Ձեզ՝ որքանով է Հայաստանի համար կարևոր իրավապահ մարմինների դերը:»

2016, 2017 և 2019թթ.-ի հետազոտությունների ընթացքում փորձել ենք պարզել, թե ինչպես են հարցվածները գնահատում ՀՀ Ոստիկանության աշխատանքի որակի փոփոխությունն այդ ոլորտում ծրագրերի արդյունքում¹⁹ (տե՛ս Գծապատկեր 65.):



Ինչպես տեսնում ենք, հետազոտության 3 տարիներին էլ գերակշռում են դրական պատասխանները: 2016թ.-ի համեմատ՝ 2017թ.-ին աճել է դրական պատասխանների տոկոսը՝ 46.6%-ից դառնալով 54.9%: 2019թ.-ին դրական պատասխանները կազմել են 80.7% (19.9%-շատ է բարելավվել, 60.8%-որոշ չափով բարելավվել է):

Հարցվողներն իրենց գնահատականներն են տվել իրավապահ մի շարք կառույցների գործունեության վերաբերյալ: Պարզելու համար հարցվողների պատասխանների հիմնավորվածության աստիճանը՝ փորձել ենք ճշտել հարցվողների առնչությունն այդ այդ կառույցների հետ: Յուրաքանչյուր կառույցի վերաբերյալ տրված գնահատականների համար հաշվարկվել են համաթվեր: 4 տարիների համար հաշվարկված համաթվերն, ըստ այդ կառույցի հետ առնչություն ունենալու, ներկայացված են Աղյուսակ 20-ում:

Աղյուսակ 20²⁰

Իրավապահ կառույցների աշխատանքը գնահատող համաթվեր՝ ըստ առնչության								
	2015թ.		2016թ.		2017թ.		2019թ.	
	Առնչվել եմ	Չեմ առնչվել	Առնչվել եմ	Չեմ առնչվել	Առնչվել եմ	Չեմ առնչվել	Առնչվել եմ	Չեմ առնչվել
Պարեկային ծառայություն	51	21	18	12	23	18	28	24

¹⁹ Հարց «Վերջին 2 տարիների ընթացքում ՀՀ Ոստիկանության աշխատանքը բարելավվելու նպատակով իրականացվել են մի շարք ծրագրեր: Ըստ Ձեզ՝ ՀՀ Ոստիկանության աշխատանքը՝ 2 տարի առաջվա համեմատ »

²⁰ Հաշվարկի մեթոդաբանությունը տե՛ս Համաթվերի հաշվարկման բանաձևերի բաժնի էջ 15-ում:

Պետ.ավտոտեսչություն	6	13	-4	8	-2	13	33	28
Քաղ.մաս (համայնքային նստիկանության բաժանմունք)	1	8	-5	1	-2	9	8	18
Օպեր լիազոր	21	10	-4	7	15	13	13	19
Թաղային (նստիկանություն)	35	16	24	14	29	18	32	21
Դատարան	-14	3	-19	1	-2	5	0	15
Դատախազություն	-32	3	-7	1	-9	5	-14	17
Միջինացված համաթիվ	10	11	0	6	7	12	14	20

Ինչպես երևում է Աղյուսակ 20-ից, տվյալ հարցի վերաբերյալ, ըստ տարիների համեմատության մեջ, նույնպես դրսևորվում է այն միտումը, որ 2015թ.-ի համեմատ 2016թ.-ին համաթվերի արժեքները նվազել են: 2016թ.-ի համեմատ 2017թ.-ին տեղի է ունեցել համաթվերի արժեքների աճ, սակայն դրանք ցածր են մնացել 2015թ.-ի համեմատ: Բացառություն են կազմում միայն դատախազության և դատարանների համաթվերը, որոնք, չնայած գտնվում են բացասական տիրույթում, այնուամենայնիվ, 2015թ.-ի համեմատ՝ 2017թ.-ին աճել են: 2019թ.-ին բոլոր կառույցների վերաբերյալ այս համաթվերն աճել են: Բացառություն է կազմում միայն դատախազությունը, որի դեպքում արժեքները նույնպես աճել են, սակայն ավելի ցածր են 2017 և 2016թթ.-ի արժեքներից: 2019թ.-ին ամենաբարձր գնահատականն ստացել է պետավտոտեսչությունը:

Իրավապահ մարմինների կամայականությունների և անօրինականությունների կանխարգելման գործում մեծ դեր ունեն մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտները: Այդ համատեքստում այս տարիներին իրականացված հետազոտությունների ընթացքում հարցվածները գնահատել են նաև որոշ իրավապաշտպան ինստիտուտների աշխատանքները: Պատասխանների հիման վրա հաշվարկվել են համաթվեր, որոնք նույնպես ներկայացվում են՝ ըստ հարցվողների առնչության (Աղյուսակ21):

Իրավապաշտպան կառույցների աշխատանքը գնահատող համաթվեր՝ ըստ առնչության

	2015թ.		2016թ.		2017թ.		2019թ.	
	Առնչվել եմ	Չեմ առնչվել	Առնչվել եմ	Չեմ առնչվել	Առնչվել եմ	Չեմ առնչվել	Առնչվել եմ	Չեմ առնչվել
Մարդու իրավունքների պաշտպան	-3	11	-10	4	0	11	13	28
Հանրային պաշտպան	-3	8	9	7	23	9	7	22
Փաստաբան	8	19	22	22	28	23	37	24
Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ	-24	12	25	14	24	14	16	20
Դիտորդական խումբ (Քրեակատարողական հիմնարկներում դիտարկումներ իրականացնող)	-13	4	-6	5	25	8	17	19
Միջինացված համաթիվ	-7	11	8	10	20	13	18	23

Աղյուսակ 21-ից և Աղյուսակ 20-ից նկատելի է, որ, ի տարբերություն իրավապահ մարմինների, դիտարկված բոլոր իրավապաշտպան կառույցների աշխատանքները գնահատող համաթվերն ունեն աճի միտումներ: 2017թ.-ի համեմատ՝ 2019թ.-ին միայն նվազել են իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների և դիտորդական խմբի համար հաշվարկված համաթվերը այն հարցվողների կողմից, ովքեր առնչություն են ունեցել, իսկ այն հարցվողների շրջանում, ովքեր առնչություն չեն ունեցել այդ կառույցների հետ, համաթվերը ևս աճել են:

2015-2017 և 2019թթ. –ի հետազոտությունների արդյունքում պարզվել է նաև այն անձանց կամ կառույցների դասակարգումը, ում կղիմեն հարցվողներն՝ ըստ առաջնահերթության՝ հանցագործության զոհ դառնալու պարագայում: Այսպես՝ հարցվածներն առաջին հերթին կղիմեն ոստիկանությանը, որին հաջորդում է «Իմ/մեր ծանոթներին, մտերիմներին, բարեկամներին» տարբերակը և «Մարդու իրավունքների պաշտպանին»: Պատասխանները²² ներկայացված են Աղյուսակ 22-ում:

²¹ Նույնը:

²² Քանի որ տրվել է մի քանի տարբերակ ընտրելու հնարավորություն, ուստի պատասխանների գումարը մեծ է 100%-ից:


Եթե Ղուք կամ Ձեր մտերիմները հանցագործության տուժող դառնայիք՝ ու՞մ կղիմեիք՝ ըստ առաջնահերթության

Կառույցի անվանում	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Ոստիկանություն	81.6%	70.3%	72.3%	73.3%
Իմ/մեր ծանոթներին, մտերիմներին, բարեկամներին	42.8%	43.9%	40.2%	29.4%
Մարդու իրավունքների պաշտպանին	27.1%	37.4%	19.4%	24.2%
Ազգային Անվտանգության Ծառայություն	9.0%	11.8%	8.8%	17.4%
Դատարան	23.4%	22.9%	12.8%	12.8%
Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին	10.6%	16.6%	10.3%	11.2%
Հատուկ Քննչական ծառայություն	14.8%	18.3%	10.9%	9.7%
Դատախազություն	13.0%	17.0%	10.4%	8.6%
Թաղային հեղինակություններին(քրեական հեղինակություն)	8.6%	11.5%	9.4%	6.3%
ԶԼՄ-ներին	4.8%	7.0%	5.1%	4.8%

Բնակչության անհանգստության/տագնապի մակարդակը

Իրավապահ մարմինների կարևոր դերերից է հանդիսանում հասարակական անվտանգության ապահովումը, ինչն իր հերթին հասարակության մոտ ձևավորում է անվտանգության զգացումը և նվազեցնում՝ հանցագործությունների զոհ դառնալու տագնապը: Այս ամենը նույնպես հնարավորություն է տալիս գնահատել իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետությունը:

Այսպես՝ անհանգստության մակարդակը գնահատելու նպատակով տրվել են մի շարք հարցեր, այդ թվում՝ ընդհանրական հարց, թե ինչպես է փոփոխվել Հայաստանում հանցագործությունների թիվը վերջին 1 տարում: 2015-2017 և 2019թթ.-ին այդ հարցի պատասխանները ներկայացված են Գծապատկեր 66-ում:



Գծապատկեր 66-ում ներկայացված արդյունքները վկայում են այն մասին, որ բնակչության շրջանում 2019թ.-ին նվազել է հանցագործությունների զոհ դառնալու տագնապը: Այն ամենաբարձրն է եղել 2016թ.-ին, ամենացածրը՝ 2019թ.-ին:

Այնուհետև փորձել ենք ըստ տարածքների առանձնացնել, թե որտեղ են մարդիկ իրենց ապահով/անվտանգ զգում: Այդ նպատակով հարցվածների պատասխանների հիման վրա հաշվարկվել են համաթվեր²³:

Պարզվում է, որ մարդիկ ամենաանվտանգ վայր են համարում եկեղեցին (3 տարիներին էլ այն 1-ին տեղում է, իսկ 2019թ.-ին համաթիվը կազմել է 82): Նախորդ տարիներին ամենանվազ անվտանգ վայրը հարցվողները նշել են «Հասարակական և/կամ քաղաքական զանգվածային միջոցառումների ժամանակ»՝ մարդաշատ վայրերը (3 տարիներին էլ այն վերջին տեղում է եղել): Իսկ 2019թ.-ին որպես ամենաքիչ անվտանգ վայր նշվել է մետրոն, որի արժեքն ավելի քիչ է 2017 և 2016թթ.-ին ստացված արժեքից: Հետաքրքրական է, որ նախկինում ամենանվազ անվտանգ վայր նշված «Հասարակական և/կամ քաղաքական զանգվածային միջոցառումների ժամանակ» տարբերակը 2019թ.-ին զգալիորեն աճել է՝ 2017թ.-ի «13»-ից դառնալով «42»: Այդ վայրը 2019թ.-ին համարվել է համեմատաբար ավելի անվտանգ՝ «աշխատանքի վայրից», «հասարակական տրանսպորտից» և «մետրոյից»: Տվյալ դեպքում նկատելի է 2018թ.-ին հասարակական-քաղաքական զանգվածային միջոցառումների ընթացքի ազդեցությունը. հասարակական վայրերն այլևս դիտարկվում են ավելի քիչ վտանգավոր: Ամբողջական պատկերը ներկայացված է Աղյուսակ 23-ում:

Աղյուսակ 23

²³ Հաշվարկի մեթոդաբանությունը տե՛ս Համաթվերի հաշվարկման բանաձևերի բաժնի էջ 15-ում:

Ապահով/անվտանգ զգացողության համաթվերն՝ ըստ վայրերի^{24 25}

Վայրերի անվանումներ	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Եկեղեցում/կրոնական ծիսակատարությունների վայրում	84	81	81	82
Փողոցում՝ ցերեկային ժամերին	69	50	67	79
Տանը	65	69	72	76
Բանկերում	60	56	64	64
Կրթօջախներում (դպրոց, մանկապարտեզ, ԲՈՒՀ և այլն)	58	61	65	63
Առևտրի վայրերում (խանութներում, սուպերմարկետներում և այլն)	58	50	58	61
Բուժհաստատություններում (Հիվանդանոց, պոլիկլինիկա և այլն)	57	47	55	58
Մշակութային միջոցառումների ժամանակ-մարդաշատ վայրերում	38	43	46	56
Ռեստորաններում, սրճարաններում և ժամանցի այլ վայրերում	44	41	44	55
Փողոցում՝ գիշերային ժամերին	38	36	49	54
Ձեր մեքենայի մեջ	31	38	42	45
Հասարակական և/կամ քաղաքական զանգվածային միջոցառումների ժամանակ- մարդաշատ վայրերում	9	7	13	42
Աշխատանքի վայրում	28	35	34	36
Հասարակական տրանսպորտում	29	32	30	36
Մետրոյում	23	28	29	27
Միջինացված համաթիվ	46	45	50	56

Հետաքրքրական է դիտարկել համաթվերն՝ ըստ 3 խմբերի՝ փակ տարածք, բաց տարածք, տրանսպորտ (տե՛ս Աղյուսակ 24): Աղյուսակ 24-ից պարզ է դառնում, որ 2015-2017 և 2019թթ. ընթացքում ամենաապահով տարածքներն են փակ տարածքները, այնուհետ՝ բաց տարածքները և տրանսպորտը:

²⁴ Համաթվերի հաշվարկում հաշվի առնված չեն «Կիրառելի չէ» և «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակները:

²⁵ Հաշվարկի մեթոդաբանությունը տե՛ս Համաթվերի հաշվարկման բանաձևերի բաժնի էջ 15-ում:

Ապահով/անվտանգ զգացողության համաթվերն՝ ըստ երեք վայրերի տիպերի

Վայր	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Եկեղեցի,Տուն, Կրթօջախ, Բանկ, Առևտրի վայր, Բուժհաստատություն, Ռեստորան,Աշխատանքի վայր	57	55	59	65
Փողոց, Մշակութային և Հասարակական և/կամ քաղաքական զանգվածային միջոցառումների ժամանակ- մարդաշատ վայրեր	39	34	44	58
Տրանսպորտ	28	33	34	36

Տրանսպորտային միջոցներում ապահովության համաթվի ամենացածր լինելու հիմնական պատճառներից է այն, որ, ըստ հարցվածների, առավել հավանական է, որ իրենք դառնան տուժող ճանապարհատրանսպորտային միջադեպից, քան այլ հանցագործություններից: Հարցվողներին տրվել է հարց, թե որքանով է հավանական, որ «... Ձեր նման շարքային քաղաքացին կարող է հետևյալ հանցագործություններից տուժող դառնալ» (տե՛ս Աղյուսակ 25-ում): Ինչպես ներկայացվեց, ամենաշատը նշվել է «ճանապարհատրանսպորտային միջադեպից» տուժելու հավանականությունը, ապա՝ «խաբեություն», «գրպանահատություն», «բնակարանի կողոպուտ»: Նախորդ տարիներին հարցվողներն ամենաքիչ հավանական են համարել «ընտանեկան բռնության», «սեռական բնույթի ոտնձգության/գործողությունների» և «առևանգվելուց» տուժող դառնալը: **Նկատենք, որ 2019թ.-ին ամենաքիչ հավանականը նշվել է «Ոստիկանության կամ այլ ուժային կառույցների կողմից ծեծի» ենթարկվելու հավանականությունը:** Տվյալ դեպքում արժեքը նախորդ հետազոտության արժեքի համեմատ աճել է «25»-ով՝ ամենամեծ աճը: Տվյալներն ավելի մանրամասն ներկայացված են Աղյուսակ 25-ում:

Այս կամ այլ հանցագործություններից տուժելու հավանականության համաթիվ

	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Ճանապարհատրանսպորտային միջադեպի	-59	-57	-52	-49
Խաբեության	-38	-38	-35	-31
Գրպանահատության/գողության	-34	-33	-28	-30

²⁶ Նույնը:²⁷ Նույնը:

Բնակարանի կողոպուտի	-27	-24	-19	-22
Մեքենայի առևանգման (ներառյալ մեքենայի որոշ մասերի կողոպուտ, օր՝ անվադողերի)	-7	-13	-7	-14
Հանցավոր հարձակման	0	-6	5	8
Շորթման	14	4	9	23
Կաշառակերության	-2	1	2	31
Սպանության կամ մահափորձի	27	18	24	34
Այլ քաղաքացիների կողմից ծեծի	36	24	30	39
Մեռական բնույթի ոտնձգության/գործողությունների («ձեռք գցել» և այլն)	39	35	40	48
Առևանգման (մարդու)	45	34	39	50
Ընտանեկան բռնության (ընտանիքի որևէ անդամի կողմից ծեծ...)	52	53	49	54
Ոստիկանության կամ այլ ուժային կառույցների կողմից ծեծի	42	20	30	55
Միջինացված համաթիվ	6	1	6	14

Աղյուսակ 26-ում ներկայացված են այն դեպքերը, որոնց հարցվողները կամ իրենց մտերիմները վերջին 1 տարում հանդիսացել են հանցագործության ականատես կամ զոհ: 2015-2017 և 2019թթ.-ին հարցվածներն ավելի շատ զոհ կամ ականատես են եղել «Ճանապարհատրանսպորտային միջադեպերի»: **Հետաքրքրական է, որ եթե նախկինում հաջորդ ամենաբարձր արժեքն ուներ «ընտրությունների արդյունքների կեղծումը»-19.2%, ներկայում այն ստացել է 8.4%՝ համարվելով ոչ այնքան հավանական:** Եվս մեկ հետաքրքրական տվյալ է այն, որ «**Ոստիկանության կամ այլ ուժային կառույցների կողմից ծեծի**» ենթարկվելու հավանականությունը նախկինում ուներ միջինից բարձր արժեք, սակայն 2019թ.-ին այն ամենաքիչ հավանականների թվում է: «Ոստիկանության կամ այլ ուժային կառույցների կողմից ծեծի ենթարկվելն» ու «(մարդու) առևանգումը» ստացել են գրեթե նույն արժեքը՝ 4.5% և 4.4%:

Աղյուսակ 26

Վերջին մեկ տարվա ընթացքում հանցագործությունների զոհ կամ ականատես եղած հարցվողների %

	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.
Ճանապարհատրանսպորտային միջադեպի	29.0%	24.4%	24.6%	29.8%
Բնակարանի կողոպուտի	7.8%	8.6%	7.3%	18.3%

Գրպանահատության/գողության	8.6%	8.1%	10.8%	18.2%
Խաբեության	11.7%	15.8%	14.4%	17.4%
Մեքենայի առևանգման (ներառյալ մեքենայի ոլոշ մասերի կողոպուտ, օր.՝ անվադողերի)	5.0%	8.4%	7.1%	17.4%
Կաշառակերության	7.4%	13.1%	9.3%	14.7%
Այլ քաղաքացիների կողմից ծեծի	5.2%	7.8%	4.8%	10.4%
Հետանկյան բռնության (ընտանիքի որևէ անդամի կողմից ծեծ և այլն)	3.1%	4.1%	2.7%	9.3%
Մպանության կամ մահափորձի	1.1%	3.6%	1.8%	9.3%
Հնտությունների արդյունքների կեղծում	9.2%	25.5%	19.2%	8.4%
Հանցավոր հարձակման	1.5%	3.1%	2.0%	8.1%
Շորթման	2.3%	6.8%	4.0%	7.6%
Հանցագործության թաքցում/ կոծկում	2.8%	7.8%	4.6%	7.4%
Մեռական բնույթի ոտնձգություն/գործողությունների («ձեռք գցել» և այլն)	0.8%	1.7%	1.0%	7.3%
Ոստիկանության կամ այլ ուժային կառույցների կողմից ծեծի	3.4%	15.1%	4.9%	4.5%
Առևանգման (մարդու)	0.5%	2.7%	0.8%	4.4%

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ 2018թ.-ին երկրում տեղի ունեցած հեղափոխությունը զգալիորեն բարձրացրել է ոստիկանության և այլ ուժային կառույցների վերաբերյալ հասարակության դրական վերաբերմունքը, մեծացրել հասարակական և/կամ քաղաքական զանգվածային միջոցառումների ժամանակ ապահովության զգացողությունը, ինչպես նաև հավատը՝ ընտրությունների արդյունքների նկատմամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

2019թ.-ին իրականացված ուսումնասիրության արդյունքների համեմատությունը 2015, 2016 և 2017թթ.-ին իրականացված նույնատիպ ուսումնասիրությունների արդյունքների հետ՝ բացահայտեցին մի շարք օրինաչափություններ, փոփոխություններ և միտումներ՝ իրավապահ մարմինների գործունեության հասարակական ընկալումներում:

- «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի»²⁸ և «Ոստիկանության վստահության համաթվի» արժեքներն ունեն ուղղակի կապ երկրում տեղի ունեցող հասարակական և քաղաքական իրադարձությունների, և դրանցում իրավապահ մարմինների ներգրավման աստիճանի հետ: Դա ակնհայտ է 2015-2016թթ., 2016-2017թթ. և 2017-2019թթ.-ի ընթացքում՝ այդ 2 համաթվերի ցուցիչների տատանումներից: Այդ համաթվերի արժեքները նվազել էին 2016թ.-ին, քանի որ տեղի էր ունեցել ՊՊԾ գնդի գրավումը, ինչին հաջորդած միջադեպերի ընթացքում իրավապահ մարմինների կողմից դրսևորված գործելաոճը կրել էր փոփոխություն: Այդ ընթացքում իրավապահ մարմինների գործունեությունը հասարակության կողմից բնորոշվել էր որպես իշխանություն ունեցող քաղաքական ուժի կողմից ընդդիմադիր քաղաքական ուժի ճնշման միջոց: Ավելին՝ 2016թ.-ին «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» գտնվել է բացասական տիրույթում՝ 0-ից ցածր էր²⁹: 2017թ.-ին այս համաթիվն աճել է՝ գտնվելով դրական տիրույթում: Այնուամենայնիվ, այն մոտիկ էր 0-ին: 2019թ.-ին իրականացված հետազոտության արդյունքներում հստակ արտացոլված է հասարակական ընկալումների վրա 2018թ.-ին տեղի ունեցած հասարակական-քաղաքական գործընթացների ազդեցությունը: Տեղի էր ունեցել հեղափոխություն, որը կատարվել էր հանրահավաքների միջոցով՝ հասարակության լայն շերտերի մասնակցությամբ: Այդ գործընթացներում հասարակությունն ականատես եղավ նախկին և նոր իշխանությունների վարքագծի դրսևորումներին, ինչպես նաև ոստիկանության գործելաոճի փոփոխությանը: Իշխանությունն այլևս չէր պատկանում այն անձանց, որոնք, ըստ հասարակական

²⁸ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» բնութագրում է քաղաքացիների հետ հարաբերություններում իրավապահ մարմինների կամայականության աստիճանը՝ այսինքն, քաղաքացիների մարդու իրավունքների խախտմանը հանգեցնող ապօրինությունների մակարդակը:

²⁹ Եթե համաթվերից որևէ մեկը մեծ է «0»-ից, դա նշանակում է, որ գերակշռում են «դրական» գնահատականները, ինչը ցույց է տալիս նկարագրվող խնդրի բացակայությունը, «0»-ից ցածրի դեպքում՝ «բացասական» գնահատականները, ինչն էլ իր հերթին մատնանշում է նկարագրվող խնդրի առկայությունը:

պատկերացումների, նախկինում իրավապահ մարմիններին օգտագործում էին որպես ընդդիմության նկատմամբ ճնշման միջոց: Նոր իշխանությունը հեղափոխության միջոցով հռչակել էր որպես հասարակության հաղթանակ և, որ իշխանությունն այլևս պատկանում էր ժողովրդին: Ուստի հասարակական ընկալման մեջ՝ ուստիկանությունը իշխանությանը ծառայեցնելու կարծրատիպը փոփոխության է ենթարկվել:

- «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» արժեքը 2015թ.-ին եղել է «0», 2016թ.-ին նվազել է «-6», 2017թ.-ին՝ աճել մինչև «7», իսկ 2019թ.-ին՝ աճել մինչև «35»: «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» բաղկացուցիչ համաթվերը ևս փոփոխություններ են կրել՝ նշանակալիորեն աճելով: Բաղադրիչ հանդիսացող «քաղաքացիների մտահոգվածության համաթիվը», նախորդ բոլոր հետազոտությունների արդյունքներով, ունեցել է բացասական արժեքներ: 2019թ.-ին այն նախորդ ուսումնասիրության արդյունքի համեմատ աճել է «35»-ով, և գտնվում է դրական տիրույթում: «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2015թ.-ին ունեցել է «0»-ին մոտ դրական արժեք («5»), 2016թ.-ին գտնվել է բացասական տիրույթում և ունեցել «-7» արժեք, 2017թ.-ին այն աճել է՝ կրկին հայտնվելով դրական տիրույթում, բայց դարձյալ մոտ լինելով «0»-ին («7»), իսկ 2019թ.-ին այն աճել է «40»-ով՝ դառնալով «45»: Մյուս բացկացուցիչը՝ «Անհատական մտահոգվածության համաթիվը», նախորդ հետազոտությունների ընթացքում ունեցել է դրական արժեք, 2019թ.-ին նույնպես աճել է՝ դառնալով «39»:
- «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի», ինչպես նաև բաղկացուցիչ համաթվերի արժեքները 2015-2017թթ.-ին ամենացածրն են եղել Երևան քաղաքում, իսկ 2019թ.-ին ամենացածրը գնահատվել է Սյունիքի մարզում: Համաթվերը բոլոր տարիներին ցածր են եղել քաղաքային բնակչության շրջանում: 2015-2017թթ. հետազոտությունների արդյունքներով՝ համաթվերը համեմատաբար ցածր են եղել արական սեռի ներկայացուցիչների շրջանում (իգական սեռի ներկայացուցիչների համեմատ): 2 դեպքերում էլ ցածր գնահատականների հավանական պատճառներից կարող է լինել այն, որ նշյալ խմբերի ներկայացուցիչներն ավելի ակտիվ են սոցիալ-տնտեսական և քաղաքացիական գործընթացներում, ուստի նրանց պատասխանները և դատողություններն ավելի շուտ հիմնված են սեփական փորձի կամ դիտարկումների վրա: 2019թ.-ին «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» կանանց և տղամարդկանց շրջանում հավասար է («35»), «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» տղամարդկանց («20») շրջանում ունի ավելի բարձր արժեք, քան կանանց («17»), «Անձնական

անպաշտպանվածության համաթիվը» տղամարդկանց («38») մոտ փոքր-ինչ ավելի ցածր է, քան կանանց («39») մոտ, «Անհատական մտահոգվածության համաթիվը» տղամարդկանց («45») մոտ զգալիորեն ցածր է, քան կանանց մոտ («60»): 2019թ.-ին դիտված այս տարբերությունները՝ ըստ սեռի, նույնպես բացատրվում է վերը ներկայացված հանգամանքով, և քանի որ, 2018թ.-ի հասարակական շարժմանը մասնակցում էին ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, հենց դրանով էլ պայմանավորված է համաթվերի արժեքներում առկա օրինաչափության փոփոխությունը: «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվն»՝ ըստ տարիքի դիտարկելիս, նկատվում է դրա արժեքի նվազում՝ տարիքի աճին զուգահեռ: Այս միտումը դրսևորվում է նաև բաղկացուցիչ հանդիսացող «Անձնական անպաշտպանվածության համաթվի» պարագայում: Մյուս բաղկացուցիչների («Անհատական մտահոգվածության» և «Քաղաքացիների մտահոգվածության» համաթվի) պարագայում՝ ընդհակառակը՝ տարիքի աճին զուգահեռ աճում է նաև համաթիվը: Ըստ կրթական մակարդակի դիտարկելիս՝ նույնպես դրսևորվում է օրինաչափություն, որն առկա էր նաև նախորդ հետազոտությունների ընթացքում: Որքանով աճում է կրթությունը, այնքանով նվազում՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվն»՝ իր բաղկացուցիչ համաթվերով և հակառակը՝ որքանով կրթությունը նվազում է, այնքանով աճում են այս համաթվի դրական արժեքները: Իրականացված հետազոտությունների տվյալներով՝ առկա է նաև կապը իրավապահ մարմինների կամայականության համաթվի (ինչպես նաև դրա բոլոր բաղկացուցիչ հանդիսացող համաթվերի) և հարցվողների ընտանիքների ամսական եկամտի չափի միջև: Գրեթե բոլոր դեպքերում ցածր գնահատականները գերակշռում են «350001 դրամից և ավելին» պատասխանը նշողների մոտ: Նույնատիպ պատկեր է նաև տնտեսական դրության սուբյեկտիվ գնահատականի և հարցվողների խավի պարագայում: Ամենաբարձր գնահատականներն առկա են սանդղակների միջին արժեքներում («գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար», «35.000-150.000 դրամ միջին ամսական եկամուտ», «միջին խավ» նշողների մոտ):

- 2016, 2017 և 2019թթ. իրականացված հետազոտությունների տվյալներով իրավապահ մարմինների աշխատանքի գնահատականները դիտարկվել են ըստ այն հանգամանքի, թե որոնք են հարցվողների հիմնական տեղեկատվական աղբյուրները: Այսպես՝ 2016 և 2017թթ. հետազոտությունների տվյալներով, այն հարցվողները, ովքեր հիմնականում տեղեկություն ստանում են հեռուստատեսության միջոցով, մեծամասամբ հակված են տալ դրական գնահատականներ, իսկ

սոցիալական կայքերից և առցանց մամուլից օգտվողներն՝ ավելի շատ բացասական: Այս տարբերությունները նախկինում պայմանավորված էին այն հանգամանքով, որ հեռուստատեսությունները մեծամասամբ համարվում էին վերահսկելի՝ իշխանությունների կողմից, ուստի և ներկայացնում էին այն տեղեկությունը, որը շահավետ էր տվյալ պահին իշխանությանը: Սա խոսում է հեռուստատեսությունների ոչ օբյեկտիվության մասին: Ի տարբերություն հեռուստատեսությանը՝ առցանց մամուլը՝ մասամբ, սոցիալական կայքերն՝ առհասարակ, անվերահսկելի են իշխանությունների կողմից, այդպիսով՝ առավել ազատ են՝ մեծամասամբ ներկայացնելու օբյեկտիվ իրականությունը: 2019թ.-ին դրական տրամադրվածություններն աճել են ինչպես հեռուստատեսությունից, այնպես էլ առցանց մամուլից և սոցիալական կայքերից տեղեկություն ստացողների շրջանում:

- Թեև համաթվերը տարբեր տարիների հետազոտությունների արդյունքներով տատանվել են, այնուամենայնիվ, «Ոստիկանության վստահության համաթիվ» ցուցիչները միշտ գտնվել են դրական տիրույթում (30-ից բարձր): Դա խոսում է այն մասին, որ թեև մարդիկ ոստիկանությանը վերագրել և որոշ չափով դեռևս շարունակում են վերագրել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են կամայականությունը, անօրինականությունը, 2019թ.-ին, սակայն, բացասական տրամադրությունները էականորեն նվազել են, ինչը վկայում է այն մասին, որ հասարակական գիտակցության մեջ, այնուամենայնիվ, առկա է դրական ակնկալիքներ ոստիկանությունից՝ որպես իրավապահ մարմին: «Ոստիկանության վստահության համաթիվը» 2017թ.-ի համեմատ աճել է՝ «41»-ից դառնալով «49»: Ինչպես համաթիվը, այնպես էլ նրա բաղկացուցիչ համաթվերը, տարիների ընթացքում ունեցել են տատանումների հետևյալ տեսքը. 2016թ.-ին նվազել են՝ 2015թ.-ի համեմատ, 2017թ.-ին աճել և, գրեթե, հավասարվել է 2015թ.-ի արժեքին, իսկ 2019թ.-ին աճել են միջինում «6»-ով: «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» «37»-ից դարձել է «48», «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը»՝ «40»-ից՝ «48», «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստականության համաթիվը»՝ «47»-ից՝ «53»:
- «Ոստիկանության հանդեպ վստահության համաթիվը» և նրա բաղկացուցիչ համաթվերն ամենացածրն են եղել Սյունիքում, ամենաբարձրը՝ Վայոց Ձորում: Դրանք համեմատաբար ավելի ցածր են եղել քաղաքային բնակչության շրջանում (ի տարբերություն գյուղական համայնքների բնակչության), արական սեռի ներկայացուցիչների (ի տարբերություն իգական սեռի ներկայացուցիչների) շրջանում: Հարցվողների կրթական մակարդակի աճին զուգահեռ՝ նվազում է վստահության աստիճանը:

Համաթվերն ավելի բարձր են միջին եկամտային խմբերում և, ըստ այս կամ այն խավին պատկանելու ինքնագնահատականի՝ միջին խավում, և ցածր են ամենացածր և ամենաբարձր եկամտային և ստրատիֆիկացիոն խմբերում:

- Փոփոխության են ենթարկվել նաև ապահով վայրերի վերաբերյալ մարդկանց պատկերացումները: Եթե նախկինում ամենաքիչ անվտանգ էր համարվում «Հասարակական և/կամ քաղաքական զանգվածային միջոցառումների ժամանակ» տարբերակը, 2019թ.-ին զգալիորեն նվազել է այդ վայրը՝ որպես վտանգավոր ընկալման աստիճան: Նմանատիպ փոփոխություն է տեղի ունեցել նաև «Ոստիկանության կամ այլ ուժային կառույցների կողմից ծեծի» ենթարկվելու հավանականության վերաբերյալ հասարակական պատկերացումներում: Եթե նախկինում այն ուներ միջինից բարձր արժեք, 2019թ.-ին այն ամենաքիչ հավանականների թվում է: Նշենք, սակայն, որ 2019թ.-ին նախորդ հետազոտությունների համեմատ, աճել են այնպիսի հանցագործությունների տեսակների զոհ կամ ականատես լինել նշողների թիվը, ինչպիսիք են ճանապարհատրանսպորտային միջադեպերը, բնակարանի կողոպուտը, գրպանահատությունը, խաբեությունը և այլն:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ 2018թ.-ի հեղափոխությամբ պայմանավորված քաղաքական իրադարձությունները, զգալիորեն բարձրացրել են ոստիկանության և այլ ուժային կառույցների վերաբերյալ հասարակության դրական վերաբերմունքը, մեծացրել հասարակական և/կամ քաղաքական զանգվածային միջոցառումների ժամանակ ապահովության զգացողությունը, սակայն պետք է ձեռնարկել քայլեր՝ ինչպես դրական ընկալումները պահպանելու, այնպես էլ այլ ոլորտներում տեղի ունեցող հանցագործությունների (ճանապարհատրանսպորտային պատահարներ, գողություններ, խաբեություններ, ընտանեկան բռնություն և այլն) կանխարգելման ուղղությամբ: Պետք է հասարակական գիտակցության մեջ արմատավորվի այն դրույթը, որ ոստիկանությունն իրականացնում է օրենքով սահմանված իր պարտականությունները: Երբ ոստիկանությունն անվերապահորեն ապահովում է մարդկանց անվտանգությունը, կանխում կամ խափանում հանցագործությունները և վարչական իրավախախտումները, բացահայտում հանցագործությունները՝ անկախ նրանից, թե որ օղակում են դրանք կատարվում կամ կատարվել, անաչառորեն ապահովում հասարակական կարգի պահպանությունն ու հասարակական անվտանգությունը, հասարակության մեջ ձևավորվում է վստահություն առ ոստիկանություն: Այս ամենի մեջ ահռելի դերակատարություն

ունեն ՁԼՄ-ները, որոնք լուսաբանելով ոստիկանության գործունեությունը, կարող են հապես փոխել հասարակական կարծիքը: